Ազգ
Azg
1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 174(4792)
ISSN: 1829-1651

# Մինսկի խումբը մոտ ամիսների ծրագիր է ներկայացրել

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պատրաստվում են կողմերին ներկայացնել «լրացուցիչ միջոցներ՝ զինադադարի իրականացման ամրապնդման, տեղերում մթնոլորտի բարելավման եւ տարածաշրջանում մարդկանց միջեւ փոխըմբռնման աջակցման նպատակով»: Այս մասին ասված է սեպտեմբերի 29-ի ուշ երեկոյան հրապարակված Մինսկի խմբի հայտարարության մեջ, որ տարածվել է Վարշավայում Արեւելյան գործընկերության շրջանակներում տեղի ունեցած գագաթաժողովի ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ հանդիպումներից հետո:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն, Իգոր Պոպովն ու Բեռնար Ֆասիեն նախագահների հետ հանդիպումներում վերահաստատել են իրենց հետեւողականությունը համանախագահող երկրների նախագահներ Մեդվեդեւի, Օբամայի եւ Սարկոզիի Դովիլյան հայտարարությանը:

«Համանախագահները ներկայացրել են մոտակա ամիսների իրենց ծրագրերը՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդի Վիլնյուսում կայանալիք դեկտեմբերի հանդիպմանն ընդառաջ», ասված է հայտարարության մեջ: Ըստ այդմ՝ համանախագահները ծրագրում են մոտ ապագայում այցելել տարածաշրջան՝ իրականացնելու իրենց աշխատանքային ծրագիրը:

Ա. Հ.

# Ռամկավար-Ազատական կուսակցության 90-ամյա հոբելյանը

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Մեր ավանդական կուսակցություններից Ռամկավար-Ազատականն այսօր իննսուն տարեկան է: Իր շուրջ մեկդարյա ոչ հեշտընթաց այդ ճանապարհը լի է եղել մաքառումներով, զանազան հաջող գործառույթներով ու նաեւ խոր հիասթափություններով: Սակայն մշտապես հստակ է եղել շատ կարեւոր մի հանգամանք՝ անկախ իրավիճակից կուսակցությունն, ի դեմս իր նվիրյալների, երբեք չընկրկեց դժվարությունների առաջ եւ հպարտ ու գալիքի հաղթանակների հստակ գիտակցումով ընթացավ իր գոյության բոլոր տարիների ընթացքում:*

Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի երկարատեւ ընթացքի կարեւորագույն սահմանագիծ է 1885թ., երբ թուրքական դժնդակ պայմաններում տառապող եւ երբեմն-երբեմն աշխարհին ապրելու իր իրավունքն ազդարարող հայ ժողովուրդը վերջնականապես թոթափելով դարավոր ընդարմացման ծանր բեռը, ոտքի ելավ փշրելու օտարի շղթաները եւ ընտրելով պայքարի կազմակերպական բարձրագույն ձեւը՝ երկնեց Արմենական քաղաքական կուսակցությունը: Կառույց, որը բարձրացնելով ազատության դրոշը, պիտի մեկտեղեր տեսական ու գործնական պայքարի բոլոր հնարավոր ձեւերը, իր ռազմավարության իրականացման ճանապարհին ընտրեր ժամանակի համար առավել նպատակահարմար մարտավարություն, ուղղորդեր ժողովրդին դեպի դարերի կաթսայում երկար քլթքլթացող եւ այնքան բաղձալի ազատ ու մարդավայել ապրելու հնարավորություններ ունեցող ապագան:

Առաջին ու միակ երկրածին Արմենական կուսակցության գաղափարախոսության սերմնացաններ ու հոգեւոր հայրեր Խրիմյան, Փորթուգալյան եւ անմիջական առաջնորդ Ավետիսյան Մկրտիչների «շունչին տակ» հասակ առավ մի սերունդ, որը հանուն բաղձալի ազատության պատրաստ էր զոհաբերելու ամեն ինչ, նույնիսկ՝ կյանքը: Նվիրյալների այդ փաղանգը հանուն պայծառ գալիքի անում էր ամեն ինչ, կրթում, լուսավորում էր ժողովրդին, զինավարժում երիտասարդությանը, բազում զրկանքների գնով զենք կուտակում, տարբեր վայրերում մասնաճյուղեր հիմնում: Սակայն հենց կազմակերպական այդ վերելքի շրջանում վրա հասավ, պարզապես պարտադրվեց, ծանր մի փորձություն՝ Վանի 1896թ. ինքնապաշտպանությունը, որը հայտնի է «Մեծ Դեպք» անունով: Արմենականներն իրենց պանծալի առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի ղեկավարությամբ եւ ՀՅԴ ու Հնչակյան կուսակցությունների ամենագործուն աջակցությամբ կարողացան փրկել Վան-Վասպուրականի հայությանը կոտորածներից՝ որպես փոխհատուցում իրենք նահատակվելով հայ ազատագրության զոհասեղանին:

Տես էջ 4



*ՌԱԿ-ի առաջին ընդհանուր ժողով, 1922 թ., Պոլիս, Քնալը կղզի: Նստած՝ ձախից աջ՝ դոկտ. Գ. Ասլանյան, դոկտ. Ինքնճյան, Մուշեղ Սերոբյան, Ավետիս Թերզիբաշյան, պրոֆ. Մարտիրոս Անանիկյան: Ոտքի՝ Լ. Գույումճյան, Հրաչ Երվանդ, Արտակ Դարբինյան, Լեւոն Թութունջյան, Ս. Սրապյան:*

# Սիրիան դադարեցրեց թուրքական ապրանքների ներմուծումը

Այդ մասին երեկ «Ասադը պատժում է. էլ ոչ մի արտահանում Սիրիա» վերնագրով գրել է թուրքական «Դունյա Բյուլթենի» կայքէջը: Հրապարակման մեջ նշվում է, որ թուրք-սիրիական հարաբերություններում առկա քաղաքական լարվածությունը փոխադրվել է տնտեսական ոլորտ: Սիրիան հայտարարեց, որ այսուհետեւ դադարեցնում է բոլոր տեսակի ապրանքների ներմուծումը Թուրքիայից, որոնց ընդհանուր ծավալը այս տարվա 8 ամիսներին կազմել է 1 մլրդ 150 մլն դոլար:

Թուրքական ապրանքների ներմուծումը դադարեցնելու որոշումը, ըստ կայքէջի, անձամբ ընդունել է Սիրիայի վարչապետ Ադիլ Սաֆարը, եւ սեպտեմբերի 22-ին հատուկ գրությամբ իրազեկել մաքսային բոլոր անցակետերը:

Ստամբուլի արտահանողների միության նախագահ Մուրադ Աֆյոլն այդ որոշումը գնահատելիս ասել է, որ դա տարածվում է թուրքական բոլոր տեսակի ապրանքների վրա, հետեւաբար իսպառ կանգ է առնում Թուրքիայից Սիրիա կատարվող արտահանությունը, ավելացնելով. «Մեր կարծիքով, սա քաղաքական որոշում է, ընդունվել է Թուրքիային պատժելու մղումով»:

Հ. Չ.

# Հայաստան կժամանի Նաբիհ Բըրրին



Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԱԺ հասարակայնության եւ տեղեկատվության միջոցների հետ կապերի վարչությունը, հոկտեմբերի 3-ին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հրավերով Երեւան կժամանի Լիբանանի ԱԺ նախագահ Նաբիհ Բըրրիի գլխավորած պատվիրակությունը: Բըրրին ազդեցիկ քաղաքական գործիչ է ոչ միայն Լիբանանում: Շիա պետական գործիչը ողջ արաբական աշխարհում մեծ հեղինակություն է վայելում: Սա նրա 2-րդ այցն է Հայաստան:

Այցի կապակցությամբ պատասխանելով «**Ազգի**» հարցին, Հայաստանում Լիբանանի դեսպանության ժամանակավոր հավատարմատար Ջիադ Աթալլահն ասաց, որ Հայաստանում Բըրրին հանդիպումներ կունենա նախագահ Սերժ Սարգսյանի, ԱԺ նախագահ Աբրահամյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի, վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Հոկտեմբերի 4-ին նախատեսվում է Լիբանանի ԱԺ նախագահի ելույթը Հայաստանի Ազգային Ժողովի նիստում:

Նաբիհ Բըրրիի գլխավորած պատվիրակությունը կայցելի Ծիծեռնակաբերդ եւ ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին: Հիշեցնենք՝ Լիբանանը Ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած միակ արաբական երկիրն է այսօր: Լիբանանի ժամանակավոր հավատարմատարը հույս հայտնեց, որ այցը կլինի արդյունավետ եւ էլ ավելի կամրապնդի բարեկամ երկու պետությունների ու եղբայրական զույգ ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները:

Հ. Ա.

# Հակամարտությունների կարգավորումը՝ միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների հիման վրա

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արեւելյան գործընկերության շրջանակներում Վարշավայում երեկ տեղի ունեցած գագաթաժողովն ավարտվեց հռչակագրով, որի համաձայն, ի շարս այլ դրույթների, 26-րդ կետում ամրագրվել է, որ գործընկերությունն այդուհետեւ էլ շարունակելու է աջակցել կայունությանն ու բազմակողմ վստահության հաստատմանը, ինչպես նաեւ հակամարտությունների կարգավորմանն ուղղված ջանքերին: Նույն կետում ընդգծվում է «հակամարտությունների շուտափույթ խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների, նաեւ այդ շրջանակներում ընդունված որոշումների ու փաստաթղթերի հիման վրա»:

Այսպիսով մի որոշ ժամանակ առաջ տեղի ունեցած նույն գործընկերության խորհրդարանական ձեւաչափի՝ Եվրոնեսթի հանդիպմանը Ադրբեջանի ու Վրաստանի, նաեւ մասամբ Մոլդովայի՝ Վարշավայում ընդունվելիք հռչակագրում միայն տարածքային ամբողջականության մասին շեշտադրում անելու մտադրությունը, որ չիրագործվեց Հայաստանի վետոյի արդյունքում, որեւէ կերպ արտացոլում չի գտել վարշավյան փաստաթղթում:

Տես էջ 3

# ՀԱԿ-ը շուրջօրյա հանրահավաքի շաբաթ հայտարարեց

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկվա ՀԱԿ հանրահավաքի շուրջ հետաքրքրություն, այնուամենայնիվ ստեղծվել էր թեկուզ հենց այն պատճառով, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն իր աշխատակիցներին հրահանգել էր հեռու մնալ հանրահավաքի վայրից՝ մի բան գիտեր: Իսկ գիտեր հավանաբար հետեւյալը. որ Տեր-Պետրոսյանը, ճիշտ է, ինքնաբուխ հանրահավաքի կազմակերպման ողջ կանոնակարգը պահելով (ժողովրդի ցանկությունը հաշվի առնել, ՀԱԿ ղեկավարության հետ խորհրդակցել)՝ որոշեց մեկ շաբաթ անընդմեջ հանրահավաք անել, փաստորեն փորձ անելով կրկնել 2008 թվականի նախամարտիմեկյան շրջանի մարտավարությունը: Թե հատկապես ի՞նչը կամ ո՞վ(քե՞ր) էր այդպիսի լուրջ քայլի ենթատեքստը կամ ազդակը, դժվար է ասել: Կամ գուցե Տեր-Պետրոսյանը որոշեց օգտագործել վերջին հնարավորությունը, քանի որ ՀԱԿ-ի համակիրների ակտիվությունը գնում էր բնականոն մարման: Եւ հենց Տեր-Պետրոսյանի ելույթից հետո, կաթկթող անձրեւի տակ, «Ազատության» հրապարակում սկսեցին ձեռքի տակ պատրաստ վրանները խփել : Ավելի մանրամասն ներկայացնենք այդպիսի որոշման պահը, իսկ ինքնաբո՞ւխ էր այդ, թե՞ նախօրոք որոշված՝ ընթերցողը թող եզրակացնի:




Տես էջ 2

ԱԶԳ **Ընթացիկ**

ԴԱՍ Է ՏԱԼԻՍ ԵՎ ԿՐԿՆՈՒՄ ԿՐԿՆՎԱԾԸ

# Նշելով իր վերադարձի երեք պայման՝ Ռոբերտ Քոչարյանը փաստորեն գնահատել է երկրի վիճակը

Պուտինի՝ որպես ՌԴ նախագահի վերադարձի հետ կապված հրաժարումը, որ անմիջապես սկսվեց Հայաստանի քաղաքական դաշտում (ամոթ է այդ մասին խոսելը, բայց ինչ արած...) երեկ թեժացրեց Հայաստանի երկրորդ նախագահի **Ռոբերտ Քոչարյանը**, ընդ որում՝ «Մեդիամաքսին» տված նրա հարցազրույցը հրապարակվեց հենց ՀԱԿ-ի հանրահավաքից ժամեր առաջ: Չգիտենք՝ այդպե՞ս էր հաշվարկել Ռ. Քոչարյանը, թե՞ դա պատահական ստացվեց (այդպիսի պատահականություններ չեն լինում): Ի՞նչ էր ասել, ուրեմն, Ռ. Քոչարյանը. նախ այն, որ մեծ քաղաքականություն իր վերադառնալը չի բացառում, եւ ապա՝ գործակալության խնդրանքով մեկնաբանել իր վերադառնալու վերաբերյալ քաղաքական դաշտի քննարկումները, ինչպես նաեւ 2012-ին Պուտինի նախագահի թեկնածու առաջադրվելու փաստը Հայաստանի ներքաղաքական գործընթացներին կապելու ու երկրորդ նախագահի քաղաքական հեռանկարների վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից. «Ինձ զարմացնում է իմ հնարավոր վերադարձի վերաբերյալ ծավալված քննարկումը՝ Ռուսաստանում ընթացող քաղաքական գործընթացների հետ ուղիղ փոխկապակցմամբ: Եվ դա տեղի է ունենում Հայաստանի անկախության քսանամյակի ճոխ տոնակատարություններից անմիջապես հետո՞: Վստահ եմ, որ քաղաքական գործընթացները պետք է հասունանան այստեղ, Հայաստանում, այլ ոչ թե նույն հարթության մեջ պրոյեկտվեն դրսից: Ես չեմ բացառում, որ կվերադառնամ մեծ քաղաքականություն: Սակայն այդ քայլին ինձ կարող են դրդել ոչ թե այն իրադարձությունները, որ տեղի են ունենում Հայաստանին թեեւ շատ մոտ եւ Հայաստանի համար շատ կարեւոր, բայց, այնուամենայնիվ, ուրիշ երկրում, այլ հետեւյալ երեք գործոնները. ա) երկրի տնտեսական վիճակի եւ մարդկանց բարեկեցության զգալի եւ կայուն բարելավման բացակայությունը, եւ, որպես հետեւանք՝ փակուղային տրամադրությունների եւ արտագաղթի աճը, բ) հասարակության տարբեր շերտերի կողմից իմ՝ մեծ քաղաքականություն վերադարձի պահանջարկը, գ) իմ ներքին համոզվածությունն առ այն, որ ես կարող եմ արմատական ձեւով բարելավել իրավիճակը»: Այս գործոնները նշելուց հետո նա շեշտել է, որ այդ երեք գործոնների առկայության պարագայում կարող են տարբեր ճանապարհներ լինել ակտիվ քաղաքականություն վերադառնալու համար. «Մնացած բոլոր հանգամանքները պորտ նրբերանգներ են մտցնում, ավելացնում են քաղաքական ռեսուրսը, բայց հիմնարար գործոններ չեն», ասել է Ռոբերտ Քոչարյանը:



Այսպիսով, փաստորեն, քաղաքական դաշտը ստանում է իրեն տանջող հարցի գլխավոր պատասխանը՝ Քոչարյանը պատրաստվում է վերադառնալ քաղաքականություն, իսկ թե ո՞ւմով, կամ ի՞նչ միջոցներով, սա մոտիկ ապագայի խնդիր է եւ կարող է բավական գլխացավանք պատճառել՛ւ Տեր-Պետրոսյանին ու նրա գլխավորած ՀԱԿ-ին, ե՛ւ Հայաստանի ներկա նախագահին:

**Ս. Խ.**

# ՌԴ ԱԳՆ. Ղարաբաղյան հարցով զբաղվում է Մինսկի խումբը, այլ ոչ ՄԱԿ-ը

**Ռուսաստանի դերակատարությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում որպես միջնորդի շատ ակտիվ ու արդյունավետ է: Ըստ ՌԴ ԱԳՆ կայքէջում տեղադրված տեղեկագրության, այսպես է պատասխանել ադրբեջանցի լրագրողի կիսագրագետ ռուսերենով մասնակցած հարցախմբին երեկ հերթական ճեպազրույցն անցկացրած Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչը:**

**Ադրբեջանցի լրագրողն իր գտնվելու վայրից թե տրվելիք հարցերից հուզված՝ փորձեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի քննարկումներից նոր Մոսկվա վերադարձած Լուկաշեւիչից ճշտել, թե «ինչու չեն կատարվում ղարաբաղյան հարցի առնչությամբ ՄԱԿ-ի մի քանի բանաձեւերը, երբ Մինսկի խմբի համանախագահները նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներ են»:**

**Լուկաշեւիչը նախ հիշեցրեց, որ ԵԱՀԿ Մինսկի խումբ ասվածը միայն Ռուսաստանը, Ֆրանսիան եւ ԱՄՆ-ը չեն, այլ այնտեղ կան էլի մի քանի երկրներ: «Դուք կարծես ոչ այնքան հաճախ եք լինում մեր ճեպազրույցներին, քանի որ ղարաբաղյան թեման բավականին հաճախ է երեւում մեր ճեպազրույցներում, դրա համար խոր էքսկուրս չեմ անի», ասաց Լուկաշեւիչը, շեշտելով, որ ղարաբաղյան հարցում ՌԴ դիրքորոշումն էլ բազմիցս հայտարարվել է:**

**Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը շեշտեց. «Մինսկի խումբը մնում է շատ կարեւոր ու արդյունավետ մեխանիզմ հակամարտության կարգավորման առումով, վերջերս էլ եղել են խորհրդակցություններ»: Իսկ ինչ վերաբերում է միջնորդական գործունեության ձեւաչափում Ռուսաստանի դերակատարությանը, ապա, ըստ Լուկաշեւիչի, այն ակտիվ ու արդյունավետ է, եւ դա ընդունում են ինչպես մյուս համանախագահները ,այնպես էլ կողմերը:**

**«Իհարկե, ամեն ինչ հարթ չի ընթանում՝ հաշվի առնելով կողմերի շատ տարբեր մոտեցումները, բայց, այդուհանդերձ, վերջին հանդիպումը Կազանում ցույց տվեց, որ կողմերի քաղաքական կամքի դեպքում առաջընթացը հնարավոր է», ընդգծեց Լուկաշեւիչը:**

**Ադրբեջանցի լրագրողի լացակումած հարցին էլ, թե ինչու ՄԱԿ բանաձեւերը չեն իրականացվում, «երբ մեկը օկուպանտ է, մյուսը՝ տուժած», Լուկաշեւիչն ամենայն բարեկրթությամբ նախ բարոյախրատական խոսք ասաց. «Նախորդ նմանատիպ հանդիպումներում ձեր կոլեգաներին զգուշացրել եմ, որ պետք է կոռեկտ լեզու ընտրել եւ էմոցիաների հավասարակշռություն պահպանել»: Այդուհետեւ շարունակեց. «ՄԱԿ բանաձեւերը խորհրդատվական բնույթ ունեն, իսկ գործընթացով զբաղվում է Մինսկի խումբը, այլ ոչ ՄԱԿ-ը»:**

**Բանակցությունները, ըստ Լուկաշեւիչի, միշտ էլ դժվար գործ են, նման ձգձգված հակամարտության դեպքում էլ արագ ու հեշտ որոշումների վրա հույս դնել չի լինում: «Ռուսաստանը եւ մեր համանախագահող գործընկերները բոլոր միջոցներն օգտագործում են մոտեցնելու կողմերի համաձայնեցնումը հիմնարար սկզբունքների շուրջ: Ռուսաստանը շահագրգիռ է, որ տարածաշրջանում վերականգնվի կայունությունը, անվտանգությունն ապահովվի, ու մենք խոսենք համագործակցության ձեւերի մասին, այլ ոչ զբաղվենք հռետորաբանությամբ ու լուրջ հայտարարություններ անենք տարածաշրջանային անվտանգության առումով», ադրբեջանցի լրագրողի մի կույսին հարցերին այսքանով արձագանքել է Ալեքսանդր Լուկաշեւիչը:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱԿ-ը շուրջօրյա հանրահավաքի շաբաթ հայտարարեց

*1-ին էջից*

Տեր-Պետրոսյանը բացահայտեց ներկա պայքարի միջոցառումների բավական մեծ զինանոցը՝ երթեր, հանրահավաքներ, պիկետներ, նստացույցեր, եւ ինչու չէ՝ շուրջօրյա հանրահավաքներ: «Հիմա-հիմա», բղավեցին մասնակիցները:«Հիմա՝ ի՞նչ», ճշտեց Տեր-Պետրոսյանը: «Նստացույց, հացադուլ, շուրջօրյա հանրահավաք», բղավեցին:

Կոնգրեսի ղեկավարության հետ 5 րոպե խորհրդակցելով՝ ՀԱԿ-ի առաջնորդը նշեց, որ ՀԱԿ-ն ընդառաջեց ինքնաբուխ միջոցառում անցկացնելու հանրահավաքի մասնակիցների ցանկությանը եւ հենց այդ պահից ազդարարեց շուրջօրյա հանրահավաք սկսելու մեկնարկը՝ կոնգրեսի անունից առաջարկելով հանրահավաքի տեւողությունը սահմանել մեկ շաբաթ: Իսկ իշխանություններին առաջադրեց նույն պահանջները, որոնք նախորդ հանրահավաքում բարձրաձայնվել էին՝ դրանցից գլխավորը համարելով մինչեւ տարեվերջ արտահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների անցկացումը, ընտրական օրենսգրքում մինչ այդ փոփոխություն անելը՝ ՀԱԿ-ի առաջարկները ներառելով եւ ապա՝ մնացյալ պահանջները:

Նա նշեց, թե հենց առաջին երկու պահանջներն են դժվար՝ արտահերթ ընտրությունների անցկացում եւ ԸՕ-ի փոփոխություն, բայց եւ՝ «Մենք մաքսիմալիստ չենք», ասաց: ՀԱԿ-ի առաջնորդը, փաստորեն, միաժամանակ պատրաստակամություն հայտնեց լրջորեն վերաբերել այդ երկու պահանջի հանդեպ իշխանության որեւէ փոխզիջման, անգամ փոխզիջման առկայության դեպքում՝ հենց վաղը սկսել երկխոսությունն իշխանության հետ: Տիգրան Առաքելյանը դիմել է նամակով ՀԱԿ-ին՝ ասելով, որ իր ազատման պահանջը չպետք է խոչընդոտի պայքարին, այնպես որ նրա ազատումը առաջին երկու պահանջների թվում չէր: Բացի այդ՝ հնարավոր երկխոսության ու նախագահականի հետ կապ պահպանելու պարագայում կապ պահպանող եւս նշանակվեց, «դեժավյու»՝ Մանուշակ Պետրոսյանը:

Իսկ ահա գլխավոր երկու պահանջի վերաբերյալ շոշափելի արդյունքի չհասնելու դեպքում՝ մեկ շաբաթ անց ՀԱԿ-ի ղեկավարությունը հանրահավաքավորի հետ կորոշի անելիքը:

Շուրջօրյա հանրահավաքի մասնակիցների վարքի կանոնները եւս ճշտվեցին՝ կարգապահություն, հասարակական կարգի կարգադրիչների կողմից կարգի պահպանություն, ալկոհոլ օգտագործածների մուտքի արգելում հրապարակ, ոստիկանների հետ շփման արգելում, ոստիկանների հետ շփվողբանակցողներ եւս առանձնացվեցին՝ Դավիթ Շահնազարյանը, Լեւոն Զուրաբյանը, Ավետիս Ավագյանը, Դավիթ Մաթեւոսյանը:

Տեր-Պետրոսյանը հատուկ շեշտեց հանրահավաքի մասնակիցների պահանջով անցկացվող միջոցառման խաղաղ բնույթը, նշելով, որ իրավապահ մարմիններն իրավունք չունեն միջամտելու դրա ընթացքին. «Մտադիր չենք երկիրը ցնցումների եւ քաոսի ենթարկել», խոստացավ նա եւ 7-օրյա տոն մաղթեց հանրահավաքավորին, քանի որ մաղձով ու նեղսրտությամբ, ըստ նրա, ոչ մի գործ գլուխ գալ չի կարող: Էլի պարելո՞ւ են:

Ուրեմն «սկսել ա»-ն հենց այս էր, հա՞, որ անցած հանրահավաքին ասում էր Տեր-Պետրոսյանը, բայց ինչի՞ կարելի է հասնել այս ուշացած միջոցառումով, դժվար է ասել, եթե չասենք, որ Երեւանի կենտրոնում նորից ապակայունացման օջախ գոյություն ունի, որը ամեն հավես անող սադրիչի (եւ դա ով ասես կարող է լինել՝ եւ ՀԱԿ-ից, եւ իշխանությունից, եւ բոլորովին երրորդ կողմանե) եւ սադրանքի համար պարարտ հող է:

Տեր-Պետրոսյանի ողջ ելույթի եւ մնացած ելույթների մասին էլ չենք խոսում, քանի որ 4 տարի նրա եւ նրանց ասածներն ասվել են: Միայն նշենք, որ ինչպես Ռոբերտ Քոչարյանն էր երեքկետանոց քայլերով երեկ խոսել, Տեր-Պետրոսյանն էլ երեք սկզբունքային ելակետից էր բխեցրել իր հետագա գործողությունները. այն է՝ իշխանությունը յուրացվել է ընտրական լայնածավալ կեղծիքներով եւ սառնասիրտ սպանդով, վարչախումբը ոչ միայն ընդունակ, այլեւ մտադիր չէ փոխել իր հանցավոր էությունը, վարչախմբի հետագա գոյությունը խոչընդոտում է պետության բնականոն զարգացմանը: Ահա այսպիսի երեքի խորհուրդ: Երեւում է՝ ոչ միայն ասված է երրորդություն սիրում:

# Շնորհավորում ենք



**Վաղը, հոկտեմբերի 2-ին, լրանում է ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար, ԱԺ նախկին պատգամավոր, Իրանում Հայաստանի նախկին դեսպան, Սփյուռքի հետ մշակութային կապի կոմիտեի երկարամյա աշխատակից, մեր թերթի հավատարիմ բարեկամ Գեղամ Ղարիբջանյանի ծննդյան 60 տարին: Հոբելյանի առիթով մեր եւ ընթերցողների անունից ջերմորեն շնորհավորում ենք եւ հոբելյարին մաղթում արգասաբեր նորանոր տասնամյակներ՝ հայոց պետականության ծառայության եւ անձնական կյանքում:**

**«ԱԶԳ»**

# 390.000 դրամի վնաս բնությանը

Բնապահպանության նախարարությունից փոխանցում են, որ սեպտեմբերի 28-ին ահազանգ են ստացել Երեւան քաղաքի Տերյան 62 շենքի բակում ապօրինի ծառահատումների վերաբերյալ: Նախարարության աշխատակազմի բնապահպանական տեսչության Երեւանի տարածքային բաժնի աշխատակիցները ուսումնասիրել են դեպքը եւ պարզել, որ ապօրինի հատվել են հացենի, թեղի տեսակի ծառեր, եւ եղրեւանու թփեր:

Բնությանը պատճառած վնասը մասնագետները գնահատել են 390.000 դրամ: Դեպքի առթիվ համապատասխան միջոցներ ձեռք առնելու եւ օրինախախտներին պատասխանատվության ենթարկելու նպատակով նախարարությունը համապատասխան գրություն կուղարկի ոստիկանության Երեւան քաղաքի Կենտրոնի բաժին:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անցուդարձ

# Հերթը կարծես թե Ֆրանսիայինն է

Դեռեւս նախքան այս տարվա հունիսի 24-ը Կազանում կայացած Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը, որից, հիշեցնենք, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունն ու ողջ միջազգային հանրությունը մեծ ակնկալիքներ ունեին կողմերին առաջարկված հիմնարար սկզբունքները համաձայնեցված տեսնելու առումով, ԵԽԽՎ-ում ելույթ ունեցավ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ **Բեռնար Ֆասիեն**: Այդ ժամանակահատվածում ֆրանսիացի Ֆասիեն, փաստորեն, ԼՂ հակամարտությանը մոտ կանգնած միակ օտարերկրացի դիվանագետն էր, որ հնարավոր համարելով, Կազանի հավանական «տապալումը», ստրասբուրգյան ամբիոնից ընդգծեց. «Եթե կողմերին չհաջողվի համաձայնեցնել առաջարկված հիմնարար սկզբունքները՝ Կազանում ապա միջնորդները հանդես կգան նոր առաջարկություններով»: Ի՞նչ է սա նշանակում, եւ ինչո՞ւ է միջնորդների նոր առաջարկությունների հավանականության մասին տեղեկացնում հատկապես ֆրանսիացի համանախագահը: Չի՞ նշանակում այս ամենը, որ Ֆրանսիան սկսում է ակտիվանալ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող, ԼՂ հիմնահարցում միջնորդ:

Իհարկե, իշխանական ամենաբարձր մակարդակում այսօր փոխստեղումներ անող Ռուսաստանը իր ներքաղաքական ծանրաբեռնվածության պատճառով չի կարող իր դիվանագիտական ու քաղաքական լուրջ ռեսուրսներն ուղղել դեպի ԼՂ հիմնահարց, մանավանդ որ Կազանի հանդիպումից հետո Կրեմլը լքող նախագահ Մեդվեդեւը «որոշակի հիասթափություն ապրեց»: Եվ չնայած որոշ ժամանակ անց Կազանից Մեդվեդեւը Բաքու եւ Երեւան գործուղեց արտգործնախարար Լավրովին՝ «կողմերին ներկայացնելու ՌԴ նախագահի առաջարկությունները», չնայած օրեր ՄԱԿ-ի ամբիոնից նույն **Լավրովը** կոչ արեց բոլոր կողմերին՝ «օգտվել Ռուսաստանի միջնորդության հետեւանքով առաջացած հնարավորություններից», այդուհանդերձ, նկատելի է, որ Մոսկվան, առնվազն մինչեւ գալիք տարվա գարուն, պարզապես ժամանակ չի ունենալու կամ «ավելի կարեւոր հարցեր է ունենալու», քան ԼՂ հիմնահարցը: Իսկ ինչո՞ւ է կարեւոր ղարաբաղյան հիմնահարցի համար «մինչեւ այս տարեվերջ ժամկետը». որովհետեւ այս տարվա հուլիսի 6-ին ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության գերագույն հանձնակատար **Քեթրին Էշթոնը**, Կազանի «տապալված եռակողմից հետո», հայտարարեց. «Ցավոք, չնայած բարձր մակարդակի հաստատման ուղերձին՝ հունիսի 24-ին Կազանում ակնկալվող բեկումը չնյութականացավ: Ինչեւէ, հիմնարար սկզբունքների շուրջը համաձայնության հասնելու ջանքերը պետք է շարունակվեն, եւ ես ողջունում եմ, որ երկու կողմն էլ վերահաստատել են դիվանագիտական գործընթացի եւ խաղաղ կարգավորման հասնելու իրենց պատրաստակամությունը: Սակայն առաջիկա ամիսների ընթացքում կարիք ունենք տեսնելու ավելին, քան այդ պատրաստակամությունն է: Կողմերը պետք է կրկնապատկեն իրենց ջանքերը՝ մինչեւ տարեվերջ համաձայնության հասնելու համար: Դա պետք է տեղի ունենա մինչեւ 2012-ի ներքին քաղաքական առաջնահերթությունները...»: Երբ Էշթոնի այս հայտարարությանը գումարենք նաեւ նրա կարեւոր հավելումը, թե «ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորումը ԵՄ ռազմավարական առաջնային շահն է», ապա հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ է Մոսկվան, համենայն դեպս՝ մինչեւ տարեվերջ հաստատ, հանձնում դրոշակակրի իր դիրքերը հատկապես ԵՄ անդամ Ֆրանսիային: Պետք է նկատել, որ այս վերջինի հիմքերը կամ հաստատումները տեսանք նաեւ այս օրերին, երբ ՀՀ նախագահը պաշտոնական այց ունեցավ Ֆրանսիա, որի շրջանակներում՝ հանդիպումներ նախագահ Սարկոզիի, ԱԺ նախագահի եւ վարչապետի հետ, այնուհետեւ՝ առաջիկա օրերին սպասվող Ֆրանսիայի նախագահի՝ միջպետական հարաբերությունների համար բարձրագույն՝ պետական այցը Երեւան: Ընդ որում, Սարկոզիի այցը տարածաշրջանային է, հետեւաբար նա կլինի նաեւ՝ հակամարտության կողմերից եւս մեկում՝ Բաքվում: Ենթադրելի է, որ Ֆրանսիայի նախագահը իր հայ ու ադրբեջանցի գործընկերներին ներկայացնելու է իր առաջարկությունները՝ հակամարտության հետ կապված, մանավանդ որ «նոր առաջարկությունների» առկայության մասին իրենց հայտարարությունում պարզորոշ նշել են Մինսկի խմբի համանախագահները՝ Վարշավայում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հետ առանձին հանդիպումներից հետո: Սրանից էլ՝ պարզորոշ հետեւություն, որ Ֆրանսիան գոնե մի քանի ամսով ամենաակտիվն է լինելու Մինսկի խմբի համանախագահներից, եւ հնարավոր է անգամ Սարգսյան-Սարկոզի-Ալիեւ հանդիպում, կամ դրանց շուրջ՝ ֆրանսիական հողում:

Թե ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ Փարիզի այս ակտիվությունը, պատասխան որոնելու երկու ճանապարհ կա. նախ՝ զուտ ֆրանսիական, հետո՝ համաեվրոպական: Վերջինս լուրջ վտանգներ կարող է պարունակել մեզ համար: Այս առումով մեջբերենք Էշթոնի վերոհիշյալ ելույթից մեկ այլ հատված, որտեղ ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության գերագույն հանձնակատարը ընդգծում էր. «Սահմանները կարող են բացվել: Մայրուղիները, երկաթուղիները եւ նավթատարերը կարող են անցնել ամենակարճ ճանապարհով...», պետք է նկատել, որ սա, ընդհանուր առմամբ, ԵՄ ընդհանրական դիրքորոշումն է, նաեւ՝ ԼՂ հակամարտության լուծման մեջ: Ինչ վերաբերում է ֆրանսիականին, ապա այստեղ մեկ հիշեցում եւ մեկ մեջբերում: Մասնավորապես հիշեցնենք Կազանի հանդիպման նախօրեին Սարկոզիի՝ միայն Սարգսյանին, եւ ոչ նաեւ Ալիեւին, ուղերձից մի հատված. «Իմացեք, որ բոլոր դեպքերում ես՝ որպես բարեկամ, եւ ինձ հետ է Ֆրանսիան՝ որպես Հայաստանի քույրը, հղում ենք Ձեզ այս վճռորոշ հանդիպման ամենաանկեղծ մաղթանքները: Իմ երկիրը ջանք չի խնայի՝ սատարելու Ձեզ այդ ճանապարհին», անշուշտ, «բոլոր դեպքերն» ու «այդ ճանապարհը» արտահայտությունները առավել քան հասկանալի են: Եվ մեջբերումը. երեկ թուրքական «Հյուրիեթը», անդրադառնալով ՀՀ նախագահի այցին Ֆրանսիա, երկու նախագահների ներկայությանը Շառլ Ազնավուրի համերգին ու առաջիկայում սպասվող Սարկոզիի պետական այցին Երեւան, գրել էր. «Սարկոզին ձգտում է ամեն կերպ վերականգնել կեսմիլիոնանոց ֆրանսահայ համայնքի վստահությունը, որը կորցրեց, երբ արգելք դրեց Սենատում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու օրինագծի վրա: Այժմ, երբ ֆրանսահայերի մի մասը հայտարարել էր, որ առաջիկա նախագահական ընտրություններում սատարելու է սոցիալիստ Ֆրանսուա Հոլանդին, Սարկոզին նույն ֆրանսահայերի սատարման կարիքը ունի»:

Ուրեմն, ստացվում է, որ ֆրանսահայերի սատարման կարիքն ունեցող Սարկոզին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի դրոշակակրի իր դիրքերից չի կարող նույն ֆրանսահայերին ամբողջովին վանել, մանավանդ որ Վաշինգտոնը ու մանավանդ հետընտրական-պուտինյան Ռուսաստանը ամենեւին էլ չեն պատրաստվում երկար ժամանակ դրոշակն այդ թողնել ֆրանսիական ձեռքերում, բացի դրանից՝ Սարկոզին գալիք տարի ունի վերընտրվելու խնդիր, այնինչ Էշթոնը «սպասում է» կողմերի միջեւ հիմնարար սկզբունքների համաձայնեցման արդեն մինչեւ այս տարեվերջ:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

## Հակամարտությունների կարգավորումը ...

1-ին էջից

**Ուշագրավ մեկ այլ հանգամանք էլ այն է, որ որեւէ կերպ չի նշվում ղարաբաղյան հարցը այն դեպքում, երբ հիշատակվում է Վրաստանը հակամարտություն ունենալու առումով, ինչպես նաեւ մերձդնեստրյան խնդիրը: Հասկանալի է, որ, մի կողմից, այս երկու տարածաշրջանները գտնվում են, որ Եվրոմիությունը ներգրավվածություն ունի, սակայն չպետք է մոռանալ, որ ղարաբաղյան հարցում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբում էլ ԵՄ անդամ Ֆրանսիան է:**

**Հռչակագիրը, որ ստորագրել են ԵՄ ներկայացուցիչները, ԵՄ անդամ երկրների, ինչպես նաեւ արեւելյան գործընկեր երկրների ղեկավարները, ողջունում է Եվրոնեսթի, ինչպես նաեւ Քաղաքացիական հասարակության ֆորումի, Արեւելյան գործընկերության գործարար ֆորումի ու Արեւելյան գործընկերության տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնֆերանսի հիմնումը: Հռչակագրի դրույթներում հաջորդական անդրադարձ է կատարվում տարբեր ոլորտներում տեղի ունեցող քայլերին եւ առաջընթացին, որ Արեւելյան գործընկերության տարբեր պետություններն գրանցում են ինչպես ասոցացման համաձայնագրի շուրջը բանակցություններում, այնպես էլ անցագրային ռեժիմին եւ խոր ու համապարփակ ազատ առեւտրի մասին փաստաթղթերի քննարկումներում:**

**Արդարության, ազատությունների եւ նման այլ կատեգորիաների կողքին հռչակագրում առանձին փաստվում է Վարշավայի գագաթաժողովի մասնակից երկրների էներգետիկ փոխկախվածությունը, որի հիման վրա էլ կարեւորվում են էներգետիկ նախագծերը՝ նաեւ Արեւելյան գործընկերության տարածաշրջանային կտրվածքով:**

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

## Ընդդեմ թմրամոլության

**ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ տեղի է ունեցել ՀՀ թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են շահագրգիռ գերատեսչությունների, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԱԱԾ, առողջապահության եւ արդարադատության նախարարությունների ներկայացուցիչներ: ԱԱԽ աշխատակազմում համատեղ ջանքերով մշակվել է թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ազգային ծրագիրը, որը գործընկերության անդամ մյուս երկրների հետ: ԱԱԽ քարտուղարի համոզմամբ՝ այս հանցատեսակի դեմ պայքարը պետք է ընթանա երեք հիմնական ուղղություններով՝ կանխարգելում, պատժի անխուսափելիություն նման հանցագործություն կատարողի համար եւ բուժման կարիք ունեցող անձանց արդյունավետ վերականգնում:**

**ԱԱԽ քարտուղարը տեղեկացրել է, որ ավարտին է մոտենում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ազգային ռազմավարության մշակումը: Այս ուղղությամբ համակարգված փաստաթուղթ ստեղծելու նպատակով ԵՄ-ի հատուկ փորձագետը արդյունավետորեն համագործակցում է մեր իրավապահ մարմինների հետ:**



**հավանության է արժանացել ԱԱԽ-ի կողմից եւ հաստատվել ՀՀ նախագահի հրամանագրով: Արդյունքում ստեղծված հանձնաժողովն այսօր քննարկել է կատարված աշխատանքները եւ նախանշել առաջգա ծրագրերը:**

**Բացման խոսքում ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը նշել է, որ թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը ՀՀ ազգային անվտանգության գերակայություններից է: Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2011թ. առաջին կիսամյակի համեմատությամբ այս տարի գրանցվել է այս ոլորտի իրավախախտումների շուրջ 7,4% աճ, սակայն առկա է նաեւ հանցագործությունների բացահայտման դրական միտում՝ շուրջ 10%-ով: Արթուր Բաղդասարյանը նշել է, որ այս ոլորտում Հայաստանը արդյունավետորեն համագործակցում է ՀԱՊԿ շրջանակներում եւ ընդգծել է այս ուղղությամբ միջազգային համագործակցության խթանման անհրաժեշտությունը: Եվրոմիությունը նույնպես շահագրգիռ է այս ոլորտում խորացնել համագործակցությունը Հայաստանի եւ Արեւելյան**

**Նիստի ընթացքում ամփոփվել են 2009-2012թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված 2011թթ. առաջին կիսամյակի աշխատանքների իրականացման արդյունքները: Քննարկումների արդյունքում հաստատվել են թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օգտագործվող նյութատեխնիկական բազայի վիճակի ուսումնասիրության եւ թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական փորձնական ծրագիր մշակող աշխատանքային խմբերի կազմերը եւ ծրագրերը, ինչպես նաեւ իրականացման հստակ ժամանակացույցը: Հանձնաժողովի նիստում վերը նշված հարցերի շուրջը հաղորդումներով հանդես են եկել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ. Պողոսյանը եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի փոխնախարար Զ. Բաղդասարյանը:**

ԱԱԽ մամուլի գրասենյակ

## Խաղաղ պայմաններում մահացած զինվորների գործերը պետք է նորից քննել

**Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի նախաձեռնությամբ երեկ Ազգային ժողովում տեղի է ունեցել փակ քննարկում բանակում խաղաղ պայմաններում սպանված զինվորների վերաբերյալ՝ մասնակցությամբ ԱԺ պաշտպանության, ներքին գործերի եւ ազգային անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանի, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արամ Սաֆարյանի, ԱԺ փոխխոսնակ Սամվել Նիկոյանի, ՄԻ առաջին պաշտպան Լարիսա Ալավերդյանի եւ բանակում խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողների եւ հարազատների:**

**«Նման փակ քննարկումները արդյունավետ կլինեն այն ժամանակ, երբ սեւազգեստ ծնողները տարբեր տեղերում չկանգնեն՝ իրենց բողոքն արտահայտելու», քննարկումից հետո նման կարծիք է հայտնել ՄԻՊ Կարեն Անդրեասյանը: Որոշվել է, որ ծնողները ՄԻՊ գրասենյակի հետ կպատրաստեն տեղեկանքներ յուրաքանչյուր գործի վերաբերյալ, կներկայացնեն բողոքներ ու խնդիրներ, իսկ ՄԻՊ-ը փաստաթղթերը կփոխանցի ԱԺ պատգամավորներին: Այնուհետեւ համապատասխան հանձնաժողովները գրություն կներկայացնեն այն մարմիններին, որոնցից սպանված զինվորների ծնողները դժգոհություններ ունեն:**

**Անդրեասյանի գնահատմամբ՝ սպանված զինվորների գործերում խնդիրը ոչ այնքան դատարանների թերի գործունեությունն է, որքան լիարժեք քննության պատճառը: «Մեր խնդիրն է պահովել նոր քննության մեկնարկ կամ օրենքով սահմանված վերահսկողություն իրականացնել այդ քննության նկատմամբ», ասաց ՄԻՊ-ը հավելելով, որ ծնողները իր հետ զրույցում ասել են, որ քննությունը կամ բավարար չափով չի իրականացվել, կամ ընդհանրապես չի իրականացվել:**

Հ. Հ.

# Ռամկավար-Ազատական կուսակցության 90-ամյա հոբելյանը

*1-ին էջից*

Ճիշտ է, հետագայում արմենականները կարողացան որոշ չափով շտկել իրերի դրությունը, վերակազմակերպել իրենց շարքերը, սակայն այլեւս նախկին հզորությունը չունեցան: Իսկ 1908թ., երբ տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը եւ սահմանադրորեն հռչակվեցին դեմոկրատական ազատություններ, արմենականները եւս ներառնվեցին «երիտասարդ» շապիկ հագած թուրքական ոճրագործ իշխանությունների հաշիշապատ շրջապտույտի մեջ եւ քաղաքական մյուս բոլոր ուժերի նման, կուլ տալով խայծը, հանդես եկան նոր՝ վերաձեւված մտածողությամբ՝ առաջարկելով համակիր բոլոր ուժերին միավորվել մեկ քաղաքական կազմակերպության մեջ: Արմենական եւ Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միջեւ սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1908թ. հոկտեմբերի 31-ին Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության ստեղծմամբ: Կուսակցություն, որը տուրք տալով ժամանակի ու երիտթուրքական հաշիշաթմբիրին, ամբողջովին հրաժարվեց արմենականության հետապնդած քաղաքական նպատակներից, ռազմավարությունից ու մարտավարությունից եւ իր նպատակ հռչակեց «վերականգնված» սահմանադրության էլ ավելի դեմոկրատացումը, երկրի ամբողջականության եւ անկախության պահպանման պայմաններում հայության ազգային ինքնության հետագա զարգացումը, մերժելով որեւէ անջատողական մտայնություն»:[1]

1908թ. տեղի ունեցած «հեղափոխության» խաբկանքը, որը ծնունդ էր տվել ՀՍՌ կուսակցությանը, շատ շուտով հայտնի դարձավ իր իրական նպատակներով: Հայ ժողովրդի բնաջնջման, իր հարազատ տարածքներից նրա բռնավտարման քաղաքականությունը, որ որդեգրել էր «նոր հեղափոխական» իշխանությունը, պարտադրեց «սահմանադրականներին» սթափվել, մի կողմ նետել թուրքական կայսրությունում դեմոկրատական բարեշրջումների միջոցով հայ ժողովրդի համար ազգային կեցության եւ զարգացման երազախաբությունը: Հստակ դարձավ այլեւս, որ կուսակցության որդեգրած ծրագիրը ժամանակավրեպ է: Այդ պատճառով էլ ՀՍՌԿ-ն սկսած 1910-ական թթ. վերջերից գործնականում հազվադեպ էր օգտագործում, իսկ շուտով ամբողջապես իր վրայից նետեց «Սահմանադրական» ինքնանվանումը (պաշտոնապես դա վավերացվեց ավելի ուշ - Ս.Ս.) եւ «հիմնական նպատակի խնդրում գրեթե ամբողջովին վերադարձավ Արմենական կուսակցության սկզբունքներին»:[2] Այս փոփոխությունը ծրագրային տեսքով արձանագրվեց ավելի ուշ 1919 թվականին, սակայն մինչ այդ կուսակցական մամուլը լի է արմատներին վերադառնալու կոչերով, հատկապես, երիտթուրքական սահմանադրությունը «սին ու պատիր» որակումներով եւ ծրագրային փոփոխություններ կատարելու ցանկությամբ: Ուղակի սկսված համաշխարհային պատերազմը, Մեծ եղեռնը եւ այլ օբյեկտիվ պատճառներ հնարավորություն չէին տալիս ի մի հավաքելու եւ կուսակցության նոր ծրագիր մշակելու: Կասկածից դուրս է նաեւ, որ ՀՍՌԿ-ին փոխարինելու եկած ՌԱ կուսակցության ծրագիրը զերծ էր Արմենականության հեղափոխական ռոմանտիզմից, եղեռնի դաժան փորձությունից իմաստնացած էր ու առաջ էր քաշում ժամանակի համար բավական իրատեսական պահանջներ:

Դեռեւս 1919թ. Փարիզում Ազգային պատվիրակության շուրջը համախմբված մտավորականության մեջ շարժում է սկսվում միավորելու Սահմանադրական ռամկավար եւ Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները: 1919թ. հունիսի 5-ին միավորման գաղափարով տոգորված նշանավոր գործիչներ Արշակ Չոպանյանը, Արշակ Սաֆրաստյանը, Միհրդատ Միհրդատյանցը, Նշան Տեր-Ստեփանյանը, Երվանդ Աղաթոնը, Պողոս Էսմերյանը, Տիգրան Կամսարականը, Գարեգին Ֆնտըգլյանը, Էմիլ Շահինյանը, Նորայր Մարտիրոսյանը եւ ուրիշներ կազմում են «Հայ Ազգային Ազատական Միությունը»[3] եւ Փարիզում սկսում են հրատարակել «Հայաստան» պարբերականը: Հայ Ազգային Ազատական միությանը (այսուհետեւ՝ ՀԱԱՄ Ս.Ս.) ակտիվորեն գործակցում էին Վ. Թեքեյանն ու Ա. Թերզիպաշյանը: «Հայաստանի» առաջին համարում Չոպանյանը մի հոդված է հրապարակում, ուր քննադատելով միասնության բացակայությունը հայ ազգի մեջ, ողջունում է Վերակազմյալ հնչակյան, Սահմանադրական ռամկավար եւ Հայ Ժողովրդական կուսակցությունների միավորման գաղափարը: Նույնանման տեսակետներով հանդես են գալիս նաեւ Փարիզում գտնվող ՀԺ կուսակցության «երկու վարիչները»՝ Միքայել Պապաջանյանը եւ դոկտոր Էնֆիեճյանը: Նախաձեռնող խմբի ջանքերով հրավիրվում է ՀԱԱՄ-ի հիմնադիր ժողով, որտեղ ելույթ ունենալով, նորաստեղծ միության դերն ու նպատակները լուսաբանում է Մ. Միհրդատյանցը: Խոսելով ՀԱԱՄ-ի դերի մասին, բանախոսը նշում է, որ դա համանման ծրագրեր ունեցող երեք կուսակցությունների (ՀՍՌ, Վերակազմյալ, ՀԺ) միավորումն է «չեզոքների ամենաստուար մեծամասնութեան հետ»:[4] Այնուհետեւ, ըստ Միհրդատյանցի, գոյացած ազգային-ազատական մեծ մարմնին պիտի միանան մյուս կուսակցությունների բոլոր այն անդամները, որոնք «հակում չպիտի ունենան ծայրայեղ ընկերվարական ձգտումներուն հետեւիլ»:[5]

ՀՍՌ կուսակցության Հայաստանի շրջանակն էլ 1919թ. գումարեց համագումար, որն ընդունեց Հայ Ռամկավար կուսակցություն անվանումը, իսկ Ամերիկայի շրջանակը նույն 1919թ. հիմնում է նոր կազմակերպություն «Ազգային Ռամկավարական կուսակցություն» անունով:[6]

Կ. Պոլսում 1920թ. սեպտեմբերին հրավիրված ՀՍՌԿ Գ Ընդհանուր պատգամավորական ժողովն ընդունեց ծրագիր, որի ամենաառաջին թեզն էր. «Կուսակցութեան անունն է. Հայ Ռամկավար կուսակցութիւն»:[7]

Այդ նույն ժամանակահատվածում նմանատիպ գործընթաց էր տեղի ունենում նաեւ Վերակազմյալ հնչակյան կուսակցության մեջ:[8] 1908 թվականից ինքնուրույն գոյատեւող ոչ մարդաշատ այս կուսակցությունը, որը եւս որդեգրել էր աստիճանական բարեփոխումների (ռեֆորմների) ուղին, պահանջում էր Արեւմտյան Հայաստանի ինքնավարություն Թուրքիայի կազմում՝ եվրոպական վերահսկումով: Վերջիններս, որ ավելի չափավոր էին, քան սահմանադրական ռամկավարները, Եղեռնից հետո եւս սթափվեցին եւ սկսեցին նորովի գնահատել իրականությունը: Արդեն 1918թ. նոյեմբերին Վերակազմյալ հնչակյան կուսակցության ամերիկյան հատվածը որոշում է, որ իրենք այլեւս «կկոչվին Հայ Ազատական Կուսակցութիւն»,[9] իսկ մի ուրիշ փաստաթղթում[10] հայտարարում են. «Վաղը՝ Հայկական ազատութեան օրերուն՝ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը՝ իբր Ազգայնական Ազատական կուսակցութիւն պիտի աշխատի հետայսու»:[11] Մի այլ վավերագրում էլ կազմակերպությունը պարզապես անվանվում է «Ազատական Կուսակցութիւն»:[12]

«Անշուշտ,- իրավացիորեն գրում է հարցի խորագիտակ Կ.Դալլաքյանը,- նոր անվանումների որոնումները արդեն իսկ վկայում են, որ հիշյալ կուսակցությունները (ՀՍՌԿ եւ Վերակազմյալ հնչակյան-Ս.Ս.) ջանում էին դեն նետել նախկին տարազը»:[13]

Սակայն խնդիրը լոկ անունների մեջ չէր: Առաջացել էին նոր պայմաններ՝ Եղեռն, սփյուռք (որպես նոր որակի գաղթաշխարհ), հայոց պետականության վերականգնում եւ այլն, որոնց զուգահեռ ծնվել էին նոր խնդիրներ: Եվ պատահական չէր, որ թե Հայ Ռամկավար եւ թե Ազատական կուսակցությունների նորաստեղծ ծրագրերում հիմնական գաղափարը հայության ֆիզիկական գոյության ապահովումն էր, որին ստորադասվում էին մնացած բոլոր ձգտումները: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ռամկավարների գլխավոր նպատակը դարձավ աշխարհով մեկ սփռված հայ գաղթականության օգնության կազմակերպումը եւ նրան դեպի Արեւելյան Հայաստան վերադարձին օժանդակելը: Այդ նպատակով ստեղծվեց «Հայաստանի Վերաշինաց հանձնաժողովը»: Դրա համար ՀՌԿ-ն մաս կազմեց նաեւ Արեւմտահայ խորհրդին եւ նրան ենթակա Ապահովություն խորհրդին, իր ավանդը ներդնելով Թուրքիայից առժամանակ ազատագրված Արեւմտյան Հայաստանի վերաշինության գործին: Ետեղեռնյան տարիներին հայ քաղաքական-հասարակական ուժերը ծավալել էին եղեռնից հրաշքով կենդանի մնացած որբերին հավաքելու շարժում: Ռամկավարները զգալի քայլեր կատարեցին այդ ուղղությամբ: Ազգանվեր այդ գործում հատկապես աչքի ընկավ ռամկավար գործիչ Ռուբեն Հերյանը: Պատերազմից հետո, անտեսելով անասելի դժվարություններն ու իրական վտանգը, Հերյանը թափառում է Դեր Զորի անապատներում եւ իրեն նվիրում հայկական որբեր փնտրելու, գտնելու եւ որբախնամ կազմակերպություններին հանձնելու ծանր առաքելությանը: Ծպտվելով անգլիական պաշտոնյայի կամ ամերիկյան միսիոների հագուստներով, ազգանվեր գործիչը հարյուրավոր որբերի է ազատում անապատներից ու թուրքական հարեմներից: Հերյանը կոչով դիմում էր ամերիկահայությանն ու եգիպտահայությանը իրեն գումարներ տրամադրել, որ նա կարողանա արաբ շեյխերին կաշառելով գլուխ բերել որբափրկիչ գործը: Հաջողելով որոշակի գումար հայթայթել՝ Հերյանը ծրագրում էր կրկին մեկնել անապատներ: Այս մտադրությամբ նա ժամանում է Կահիրե, որտեղ 1921թ. հուլիսի 7-ին հանկարծամահ է լինում:

Փարիզի խաղաղության կոնֆերանսում ռամկավարները պաշտպանում էին Ազգային պատվիրակության տեսակետը: 1921թ. Լոնդոնի կոնֆերանսում եւ Լոզանում նրանք շարունակեցին աջակցել Պողոս Նուբարի պատվիրակության դիվանագիտական ջանքերին, այն խորին համոզմամբ, որ Միացյալ եւ Անկախ Հայաստանը պիտի բաղկացած լինի Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստաններից ու անպայման ելք ունենա դեպի ծով:

Կուսակցության Եգիպտոսի շրջանակը ծրագրում է Անգլիայից գնել 20 ինքնաթիռ, «օժտելու համար Հայաստանի բանակը օդային տորմիղով մը»:[14] Անհրաժեշտություն է առաջանում նաեւ պատրաստել օդաչուներ հայկական բանակի համար: Այդ նպատակով դիմումներ են արվում Իզմիրի եւ Ամերիկայի ռամկավար շրջանակներին, որպեսզի 50 օդաչու պատրաստեն: Օդանավերի համար բանակցությունները ընթանում են անգլիական զինվորական իշխանությունների հետ՝ 1920թ. ապրիլից-օգոստոս: Մինչ հոկտեմբեր գնվում է 10 ինքնաթիռ, իսկ նոյեմբերի 27-ին նաեւ մնացած 10 (յուրաքանչյուր ինքնաթիռ գնահատված էր 100 եգիպտական ոսկի): Բայց մինչեւ ռամկավար շրջանակները զբաղված էին օտար օդաչուներ գտնելու եւ հայերից օդաչուներ պատրաստելու գործով, իրադրությունը կտրուկ փոխվում է: Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի պարտությունից եւ Հայաստանի խորհրդայնացումից հետո անգլիական իշխանությունները արգելում են ինքնաթիռները Հայաստան ուղարկել:[15]

Ռամկավարները այս շրջանում շատ ջանքեր թափեցին, որպեսզի ԱՄՆ-ի Սենատն ընդունի Հայաստանի մանդատը, սակայն դա չիրականացավ: 1920թ. մայիսի վերջերին ԱՄՆ Սենատը քննարկեց այդ հարցը եւ 23 կողմ 52 դեմ ձայների քանակով մերժեց:[16]

1921թ. շարունակվող միության բանակցությունները Հայ Ռամկավար եւ Ազատական կուսակցությունների միջեւ փետրվարին մտնում են ավարտական փուլ՝ նրանք համաձայնության են գալիս միասնական ծրագրի ու կանոնագրի շուրջ: Որոշ բանավեճի տեղիք է տալիս միայն նոր կազմավորվող կուսակցության անվան հարցը: Բանակցություններն ընդհանրապես ընթանում էին կառուցողական եւ համերաշխ մթնոլորտում Մ. Սվազլի եւ Ա. Թերզիպաշյանի փոխնիփոխ ատենապետությամբ: Վերակազմյալ Մ. Գալֆայանն առաջարկեց նոր ստեղծվելիք կուսակցությունն անվանել «Ազատական Ժողովրդապետական»,[17] որը միանշանակ չընդունվեց եւ երկար վեճերի առիթ դարձավ: Ի վերջո ռամկավար Ա. Ինճիճյանն առաջարկեց «Ազատական Ռամկավար»[18] անունը: Սակայն կուսակցության անվան հարցը հետաձգվեց մինչեւ միության բանակցություններին Հայ Ժողովրդական կուսակցության մասնակցության խնդրի վերջնական ճշտումը:

1921թ. օգոստոսին ՀԺԿ ներկայացուցիչ Մ. Պապաջանյանը մեկնում է Կ.Պոլիս, հանդիպում ունենում ռամկավարների ու վերակազմյալների հետ, որի արդյունքում վերջնականապես պարզվում է, որ ՀԺԿ-ն չի մասնակցելու միությանը:[20]

Միության բանակցությունները գրեթե զուգահեռաբար ընթանում էին ռամկավարների ու վերակազմյալների ամերիկյան հատվածների միջեւ, եւ մշտական կապը պահպանվում էր նրանց ու Կ.Պոլսի կենտրոնների հետ: Երկար քննարկումներից ու բանավեճերից հետո, մասնավորապես միմյանց հասցեին կուսակցական պարբերականներում (ռամկավարական «Ժողովուրդի Ձայն» եւ ազատական «Առավոտ») հնչած ոչ տեղին ու անհարկի փոխադարձ մեղադրանքների խնդիրը հարթելուց հետո 1921թ. սեպտեմբերին միության պայմանները վերջնականապես մշակելու եւ ի մի բերելու համար երկու կուսակցությունների կողմից ընտրվում են հավասար թվով՝ երեքական ներկայացուցիչ: Ռամկավարներից էին՝ Ա. Մալեմեզյանը, Կ. Փափազյանը եւ պրոֆ. Լ. Անանիկյանը, իսկ ազատականներից՝ Հ. Ծովիկյանը, Լ. Կյուլեզյանը եւ Ա. Տեր-Մարկոսյանը:[21] Բանակցությունները սկզբում ընթանում էին ազատականների ամերիկյան շրջանակի Բոստոնում հրատարակվող պաշտոնաթերթ «Պահակի» խմբագրատանը:

Ի վերջո տարբեր տեղերում մասամբ եւ զուգահեռաբար ընթացող բանակցությունները, որոնք ընդհանրապես ընթանում էին կառուցողական մթնոլորտում եւ ցանկացած խոչընդոտ հաղթահարելու նպատակամղումով, տալիս են բաղձալի արդյունք: Ռամկավար եւ Ազատական կուսակցությունների լիազորները համաձայնում են միության վերջնական պայմաններին եւ նոր կուսակցության կազմավորմանը, որը պիտի կրեր «Ռամկա-



***1991թ. հուլիսի 4: ՀՀ արդարադատության նախարար Վահե Ստեփանյանը ՀՌԱԿ գրանցման վկայականն է հանձնում ատենապետ Ռուբեն Միրզախանյանին: Նստած՝ փոխատենապետ Սերժիկ Ծատինյան, Սուրեն Սարգսյան եւ Արմեն Մանվելյան:***

# 90-ամյակ

վար-Ազատական» (Democrat-Liberal) անունը: Այն հռչակվում է Կ.Պոլսում՝ 1921թ. հոկտեմբերի 1-ին: Նոր կուսակցության ստեղծման փաստաթուղթը ստորագրում են ազատականներից՝ կենտրոնական վարչության անդամներ Մ. Սվազյանը, Հ. Երվանդը, Լ. Գույումջյանը, ռամկավարներից՝ Ա. Թերզիպաշյանը, Ա. Ինճիճյանը, Գ. Պեոզիկյանը:

Հիմնարար փաստաթուղթը, որ կրում էր «Ռամկավար եւ Ազատական կուսակցութեանց միութեան» վերնագիրը, հայտարարում էր, որ «Ազգայնական երկու կուսակցություններու (ՀՌԿ եւ ՌԱԿ-Ս.Ս.) միացումին համար յառաջ տարված բանակցությունները հաջողությամբ վերջացած ըլլալով այսօր կիռչակենք անոնց անդայման եւ վերջնական միությունը՝ Ռամկավար Ազատական կուսակցություն անունին տակ»:[22] Նորակազմ կուսակցությունը համագործակցության էր հրավիրում «ազգանվեր բոլոր կազմակերպություններին, որոնք այլեւայլ կերպով նվիրված են Հայաստանի ազատության եւ վերաշինության գործին»:[23]

Ռամկավար Ազատական նորաստեղծ կուսակցությունը թիվ մեկ շրջաբերականով կուսակցության բոլոր շրջանային վարչություններին ու ակումբներին տեղեկացնում էր միության ակտի մասին եւ շեշտում, որ այն ինքնանպատակ չէ եւ մեզ բոլորիս պարտավորեցնում է այսուհետեւ ավելի համախմբված լծվել հայանպաստ գործունեության: Իսկ Կալիֆոռնիայի շրջանի պաշտոնաթերթ «Նոր կեանքի» խմբագիր Սարաֆյանը «Հայ ռամկավար կուսակցութիւնը» հոդվածում գրում է. «Մեզի համար հայ ազգի ուրոյն գոյութիւնը ամենասուրբ գաղափարական մըն է, զի հայ ազգի ինքնուրոյն գոյութեան պահպանումը ապահովելու համար էր, որ հայ ժողովուրդը դարերու ընթացքին հանձն առավ քալել խաչի ճամփայեն»:[24] Իսկ ինչ վերաբերում է «ռամկավար» բառին, ապա նշվում է, որ «կուսակցութիւնը կհաւատայ, թե հայ ժողովուրդը միշտ ձգտած է դէպի ռամկավարութիւն: Անիկա կհաւատայ,- գրում է Սարաֆյանը,- թէ հայ ժողովուրդը Հայաստանի անկախութեան հոյակապ տաճարը պիտի կանգնէ ռամկավարութեան անխորտակելի հիմունքին վրայ ուր հաստատուած են Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի ազատական պետութիւնները»:[25]

Նախկին կուսակցությունների բոլոր շրջանակները շտապեցին ողջունել միությունը: Միության հայտարարությունից հետո աշխարհի տարբեր հայաշատ կենտրոններում, որտեղ կային երկու կուսակցությունների տեղական կազմակերպություններ, միավորման գործընթացը շարունակվում էր: Նույնը կատարվում է նաեւ ՀՌԿ եւ ԱԿ պաշտոնաթերթերի հետ. նրանք միանում են եւ միասնական խմբագրակազմով լույս են տեսնում համատեղ անվամբ, ինչպես օրինակ «Ազգ» եւ «Պահակ» օրաթերթերը միացան եւ սկսեցին լույս տեսնել «Ազգ-Պահակ» միասնական անվամբ: Լավատես ու հուսադրող հեռանկարներով խանդավառված, բազմաթիվ ոչ կուսակցականներ եւ խմբակներ ընդունվեցին նորակազմ ՌԱԿ-ի շարքերը, եւ նորածին ՌԱԿ-ը քանակով ու որակով հասավ բավականին բարձր մակարդակի:

Ստեղծված նոր՝ Ռամկավար ազատական կուսակցությունն (ՌԱԿ) ուներ իր յուրահատուկ խնդիրները եւ նոր որակ էր հայ քաղաքական կյանքում: Վերածվելով գաղութահայ կարեւոր գործոնի, նորածին կուսակցությունը հետապնդում է երկու գլխավոր նպատակ՝ ազգապահպանում եւ Հայ դասի հետապնդում՝ միաժամանակ աշխատելով բոլոր հնարավոր միջոցներով օժանդակել հայրենիքի բարգավաճմանն ու հզորացմանը:

1922թ. հունիսի 2-ին Կ. Պոլսի Գնալը կղզում գումարված ՌԱԿ-ի անդրանիկ համագումարը հստակ նշեց այն ճանապարհը, որով պիտի հետագայում ընթանար կուսակցությունը: Չկիսելով կոմունիստական վարչակարգի գաղափարախոսությունն ու գործելաոճը, ռամկավարները ճիշտ կողմնորոշվեցին ստեղծված խառնաշփոթ իրավիճակում եւ հայտարարեցին, որ Խորհրդային Հայաստանում առնվազն հայ ժողովրդի գոյությունն ապահովված է արդեն եւ Արեւմտահայաստանի Դատը հետապնդելու հետ միասին, իրենք բոլոր հնարավոր միջոցներով կաջակցեն Հայաստանի տնտեսական եւ բարոյական վերաշինությանը:

Մեծ ջանքերի գնով հաջողվեց 1924-25թթ. կազմակերպել հինգհազարանոց քարավանի ներգաղթը հայրենիք: Առավելապես ՌԱԿ-ի ջանքերով սկսեց կառուցվել ու ամրապնդվել հայրենիք-սփյուռք կամուրջը: 1924թ. հունվարի 14-ին Փարիզում տեղի ունեցած երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովը կարեւոր դերակատարություն ունեցավ կուսակցության համար, որովհետեւ նրա որդեգրած ուղեգիծը գրեթե նույնությամբ շարունակվեց եւ հասավ մինչեւ մեր օրերը: Համագումարը մասնավորապես բանաձեւեց, որ սփյուռքահայությունը կգործի հայրենիքի կառավարությանը համախորհուրդ, կաջակցի հայրենիքի վերաշինությանը, ազգահավաքման եւ ազգապահպանման գործին, ավելի կկազմակերպի հայ գաղութները եւ կամրապնդի հայրենիք-սփյուռք կապերը:

Մշտապես հավատարիմ մնալով կուսակցության տեսական եւ գործնական քայլերի միասնականության սկզբունքներին, ՌԱԿ-ը սատար կանգնեց ՀԲԸՄ-ի, 1922թ. ծնունդ առած ՀՕԿ-ի, Կարմիր խաչի Հայաստանի մասնաճյուղի հայրենանվեր գործունեությանը, երկրորդ համաշխարհայինի տարիներին հակաֆաշիստական պայքարին եւ, հատկապես, 1924-48 եւ 1967թթ. ծավալված զանգվածային կամ մասնակի ներգաղթերին: Խիստ կարեւոր դերակատարություն ունեցավ ՌԱԿ-ի ծավալած հայանպաստ եւ հայրենանպաստ քարոզչական աշխատանքը, որին լավագույնս ձեռնամուխ էին այն բազմաքանակ պարբերականները, որոնք մեծագույն զոհողությունների գնով լույս էին ընծայում ռամկավարներն աշխարհի տարբեր մասերում:

Իր կազմավորման հենց սկզբից ՌԱԿ-ը շարունակաբար հետապնդեց Հայ դատը, մինչեւ որ 1965թ. տեղի ունեցան համազգային հուշատոներն ու երջանկահիշատակ Գերսամ Ահարոնյանի խմբագրությամբ լույս տեսավ «Յուշամատեան Մեծ Եղեռնի» կոթողային հատորը: Հետաքրքրական է, որ 1971թ. ՌԱԿ-ի 13-րդ համագումարում բանաձեւվեց. «Հետապնդել Հայկական դատը, արեւմտահայ նահանգները ազատելու եւ հայերուն վերադարձնելու նպատակով: Միաժամանակ սկսիլ Ղարաբաղն ու Նախիջեւանը բարեկամական դիմումներով եւ այլ ճանապարհներով վերստանալու աշխատանքները, որովհետեւ Ղարաբաղն ու Նախիջեւանը կսպասեն իրենց իրավատէրերուն»:[26] Ընդհանրապես, ՌԱԿ-ը մշտապես ունեցել է մեկ գերագույն նպատակ՝ հայ ժողովրդի ազատությունն ու իր իրավունքների վերականգնումը պատմական հայրենիքում: Նրա գոյատեւման ապահովությունը, որպեսզի կարողանա իր ազգային ազնվագույն հատկանիշները զարգացնել, իր ստեղծարար աշխատասիրության, իր գեղապաշտ հոգու վեհ թռիչքների, իր իմացական հարաճուն հանճարի արգասիքներով հասարակության առաջադիմության տաժանելի ճիգին իր խոնարհ նպաստը մասուցել:

Հավատարիմ իր հայրենապաշտ դավանանքին, ՌԱԿ-ը ոչ միայն ամբողջովին սատար կանգնեց Արցախյան շարժմանը, Սպիտակի երկրաշարժից տուժածներին առավելագույն նպաստ բերելու գործին, այլեւ անհապաղ ողջունեց Հայաստանի անկախացումն ու անմիջապես լծվեց բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով նորանկախ հանրապետությանը՝ հաղթահարելու առկա բազմաթիվ ու բազմապիսի դժվարությունները:

Դառնալով նորանկախ Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդարանական կուսակցություններից՝ ի դեմս նորածին ՀՌԱԿ-ի, եւ ունենալով մեծաքանակ ֆրակցիաներից մեկը, ռամկավարները կառուցողական ընդդիմության դիրքերից եւ հավատարիմ ազատական ռամկավար սկզբունքներին, շարունակեցին իրենց համեստ նպաստը բերել հայրենաշեն սրբազան գործին: Սակայն մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով այսօր կուսակցության հետագա ընթացքը շեղվել է իր զարգացման բնականոն ուղուց, ինչն, իմ խորին համոզմամբ, ժամանակավոր բնույթ է կրում եւ մոտ ապագայում, հուսով եմ, կշտկվի, եւ ամեն ինչ կընթանա հարթ, խաղաղ եւ ստեղծագործական նվաճումներով լեցուն ճանապարհով: Որովհետեւ ոչ միայն ՀՀ-ում, այլեւ աշխարհի զարգացած բոլոր երկրներում, անհատի ազատության ու սեփականության իրավունքի հիմնարար դրույթները, որոնք ռամկավար-ազատական գաղափարախոսության հենքն են, կարողացել են քննություն բռնել, ապացուցել իրենց կենսունակությունը: Ավելին, ինչպես գրում է լիբերալ-դեմոկրատական գաղափարախոսության ժամանակակից տեսաբան Ֆ. Ֆուկույաման, «լիբերալ-դեմոկրատիան կարող է լինել մարդկության գաղափարական զարգացման վերջնակետը եւ մարդկային կառավարման վերջնական ձեւը», իսկ հայ ժողովուրդը դա հասկացել է սրանից ուղիղ 90 տարի առաջ՝ ի դեմս ՌԱԿ-ի ստեղծման:

**ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Արմենական-ՌԱԿ կենտրոնական վարչության անդամ, պգթ, դոցենտ**

## Ծանոթագրություններ

*1. ՀՌԿ ծրագիր: ՌԱԿ, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վավերագրեր, կազմեց դոկս. Վաչէ Ղազարեան, Պէյրութ, 1988, էջ 21-24:*
*2. Թեզիսներ, Արմենական կուսակցության 110 ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի (12 մարտի, 1996թ.), Երեւան, 1996թ., էջ 7:*
*3. Պողոսեան Հ., Կուսակցական կյանքի հուշերես, Պէյրութ, 1987թ., էջ 15:*
*4. «Զարթօնք», 1983թ., ապրիլի 9, «Հայ Ազգային Ազատական Միութիւն» հոդված, հեղինակ դոկս. Վաչէ Ղազարեան:*
*5. Նույն տեղում:*
*6. Ծրագիր ՀՌ կուսակցության: Վ. Ղազարյանի կազմած վերոհիշյալ ժողովածու, էջ 47:*
*7. Նույն տեղում, էջ 36:*
*8. 1908թ. Արմենականներին միացել ու ՀՍՌԿ-ն ձեւավորելիս մաս էր կազմել Վերակազմյալների մի մասը:*
*9. Նույն տեղում, էջ 65:*
*10. Վ.Ղազարյանը էջ 73-ում գրում է, որ չի կարողացել ստուգել ե՞րբ է լույս տեսել այս «Ծրագիր Վերակազմեալ Հնչակեան (Ազատական-Ազգայնական) կուսակցութեան» փաստաթուղթը: Մեզ հաջողվեց պարզել, որ այն լույս է տեսել առանձին գրքույկով 1919թ. Բոստոնում:*
*11. ՌԱԿ վավերագրեր, էջ 73:*
*12. Նույն տեղում, էջ 88:*
*13. Դալլաքյան Կ., նշվ. աշխ., էջ 2:*
*14. «Ազգ-Պահակ», Բոստոն, 1922թ., սեպտեմբերի 30:*
*15. «Զարթօնք», 1971թ., դեկտեմբերի 28:*
*16. Ճիզմեչեան Մ., նշվ. աշխ., էջ 444:*
*17. ՌԱԿ վավերագրեր, էջ 211:*
*18. Նույն տեղում, էջ 215:*
*19. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 13:*
*20. ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 49:*
*21. Ճիզմեչեան Մ., նշվ. աշխ., էջ 490:*
*22. ՌԱԿ վավերագրեր, էջ 220: Նաեւ Ճիզմեչեան Մ., նշվ. աշխ., էջ 491:*
*23. Նույն տեղում, էջ 47:*
*24. «Նոր կեանք», 1919թ., հունիսի 11:*
*25. Նույն տեղում:*
*26. Ղազարյան Վ., ՌԱԿ, Ուղեցույց եւ համառոտ պատմություն, Ե., 1991, էջ 93:*

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

# Եվրոխորհրդարանը օրինական ճանաչեց Պաղեստինի անկախացման հայտը

**Եվրոխորհրդարանը օրինական է համարել Պաղեստինի պետության անկախությունը ճանաչելու խնդրանքով Պաղեստինյան ինքնավարության ներկայացրած հայտը: Այդ մասին հաղորդվում է Եվրոմիության օրենսդիր ժողովի կայքէջում:**

**Որոշումն ընդունվել է Եվրոխորհրդարանի սեպտեմբերի 29-ի նիստի արդյունքների հիման վրա: Ըստ որում, ընդունված բանաձեւում նշվում է, որ Պաղեստինի պետության ստեղծումը հնարավոր է միայն Իսրայելի հետ բանակցությունների միջոցով:**



**Նշելով սեփական սահմաններում անվտանգության երաշխիքներ ունենալու Իսրայելի իրավունքը, Եվրոխորհրդարանի փաստաթուղթը ընդունում է 1967-ի սահմաններով պետություն ստեղծելու Պաղեստինյան ինքնավարության իրավունքը: Երուսաղեմը պետք է դառնա երկու պետությունների մայրաքաղաք, ըստ որում՝ այդ սահմանների միակողմանի փոփոխումը պետք է համարվի անվավեր: Պատգամավորները կոչ են արել խնդրի լուծումը գտնել մեկ տարվա ընթացքում:**

**«Ջերուսալեմ փոստ» թերթը գրում է, որ Եվրոխորհրդարանի պատգամավորները որոշումն ընդունել են միաձայն:**

**Պաղեստինյան ինքնավարության ղեկավար Մահմուդ Աբբասը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունին Պաղեստինի անկախությունը ճանաչելու հայտ էր ներկայացրել սեպտեմբերի 23-ին: Սեպտեմբերի 28-ին Անվտանգության խորհուրդը որոշեց հայտը հանձնել հատուկ հանձնաժողովի քննարկմանը:**

**Պաղեստինցիների հայտի դեմ հանդես է գալիս ԱՄՆ-ը, որի կարծիքով անկախության հարցի լուծումը պետք է գտնվի Իսրայելի եւ Պաղեստինի երկկողմ բանակցությունների հիման վրա: Պաղեստինցիները մտադիր են դրական բանաձեւի ձախողման դեպքում դիմել ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովին, որի անդամների մեծ մասը կողմնակից է Պաղեստինի անկախությանը: Բայց այդ դեպքում Պաղեստինը ՄԱԿ-ում կունենա դիտորդ երկրի կարգավիճակ՝ առանց ձայնի իրավունքի:**

# Սիրիայում ձվեր եւ լոլիկներ՝ ԱՄՆ դեսպանի վրա

## *Քլինթոնը պահանջում է ապահովել անվտանգություն*

Վաշինգտոնը Դամասկոսից պահանջում է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել Սիրիայում աշխատող ամերիկացի դիվանագետների անվտանգությունն ապահովելու համար: Դա ընդգծել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը՝ մեկնաբանելով Սիրիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Ֆորդի եւ նրա մի քանի ենթակաների վրա կատարված հարձակումը:

«Մենք խիստ վճռականորեն դատապարտում ենք ոչնչով չարդարացված այդ հարձակումը», ասել է պետքարտուղարը, ավելացնելով, որ «դեսպան Ֆորդը եւ նրա օգնականները զբաղված էին սովորական դիվանագիտական աշխատանքով»:

Քլինթոնի խոսքերով՝ ԱՄՆ վարչակազմը վերջին միջադեպը անհապաղ քննարկել է Սիրիայի կառավարության հետ. «Մենք պահանջում ենք, որ Սիրիայի իշխանությունները բոլոր հնարավոր քայլերը ձեռնարկեն իրենց պարտավորություններին համապատասխան, միջազգային իրավունքի շրջանակներում մեր դիվանագետներին պաշտպանելու համար», շարունակել է Քլինթոնը: Խոսքը դիվանագիտական հարաբերություններին վերաբերող Վիեննայի 1961 թ. միջազգագրի մասին է:

Հիշյալ միջադեպը տեղի էր ունեցել սեպտեմբերի 29-ին, երբ նախագահ Բաշար Ասադի բազմաթիվ կողմնակիցներ հարձակվել էին ամերիկացի դիվանագետների ավտոշարասյան վրա, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Սիրիացիները մանր քարեր, ձվեր, լոլիկներ էին նետել դեսպան Ռոբերտ Ֆորդի եւ ամերիկացի մյուս դիվանագետների ավտոմեքենաների վրա այն պահին, երբ նրանք մոտենում էին սիրիացի այլախոհներից մեկի տանը:

Այդ միջադեպից մի քանի ամիս առաջ տեղի էր ունեցել հարձակում ԱՄՆ դեսպանատան վրա: Այդ ժամանակ դեսպան Ֆորդն այցելել էր Համա քաղաք, որը Սիրիայում հակակառավարական շարժման կենտրոններից մեկն է: Համայում դեսպանին ընդունել էին ջերմորեն, սակայն Դամասկոսում Ասադի կողմնակիցների ամբոխը փորձել էր գրոհով ներխուժել ԱՄՆ դեսպանատուն եւ աղբ էր նետել շենքի վրա:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# Թումանյանի ստեղծագործությունները՝ ֆրանսերեն



Թումանյանի թանգարանում կայացավ ֆրանսահայ գրող եւ թարգմանիչ Ալիս Վառվառյան-Սաբունջյանի «Իմ ընկեր Թումանյան» գրքի շնորհանդեսը: Տարիներ առաջ Փարիզի հրատարակչություններից մեկը որոշեց հայկական գրականության լավագույն նմուշներից ֆրանսերենով հրատարակել ու դրանք սփռել ֆրանսախոս երկրներում: Եվ այդ ծրագրի առաջին գիրքը եղավ «Հայաստանի հրաշալիքները»: Այդ գրքի պահանջարկը այնքան մեծացավ, որ հրատարակչությունը որոշեց այս անգամ ընթերցասերների հետաքրքրությունը բավարարել՝ հրատարակելով Հովհ. Թումանյանի 24 ստեղծագործությունները մեկ ժողովածուում եւ այն վերնագրվեց «Իմ ընկեր Թումանյան»: Հենց այդ ժողովածուն ապրիլ ամսին ներկայացվեց Ժնեւի միջազգային գրքի ցուցահանդեսին ու մեծ հետաքրքրություն, արձագանք եւ պահանջարկ ունեցավ: Եվ Ֆրանսիայում, եւ Երեւանում այդ ժողովածուն այժմ վաճառվում է ու մեծ արձագանք ունի:

Շնորհանդեսն ընթանում էր ճիշտ այն օրը, երբ Փարիզում հանդիպում էին Հայաստանի ու Ֆրանսիայի նախագահները, ուստի շնորհանդեսին ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանի ողջույնն ու շնորհավորական ուղերձն ընթերցեց դեսպանության ներկայացուցիչ Ժան Պոլ Մասյեն: «Այս նախագծի կողքին եմ եղել հենց առաջին օրվանից եւ տեսել Թոփալյանի նկարազարդումները ու հետեւել եմ ընթացքին: Շատ ուրախացա, երբ տեղեկացա, որ Փարիզում գիրքը հաջողություն է ունեցել: Գրքի ազգային կենտրոնն աջակիցն է այս ծրագրի իրականացմանը: Ուրախությամբ ասեմ, որ հոկտեմբերի 17-21-ը կկազմակերպվի մեծ միջոցառում «Հայաստան, Հայաստան» խորագրով, որն ուղղված է ներկայացնելու հայ գրողների գործերը՝ սփյուռքահայերին», ասաց պրն Մասյեն:

Շնորհանդեսին ներկայացված էին նաեւ գրքի ձեւավորող Լորեն Թոփալյանի մի քանի տասնյակ նկարազարդումները: «**Ազգ**»-ի հետ զրույցում նա ասաց. «Թումանյանի ստեղծագործություններից ծանոթ էի «Անուշ»-ին, «Մի կաթիլ մեղր»-ին, որ կարդացել եմ ֆրանսերենով: Ես կարողացա ծանոթանալ Թումանյանի շատ գործերին ու սիրով կատարեցի նկարազարդումները բնօրինակի տեքստերով: Աշխատել եմ ամբողջ հոգով եւ փորձել եմ հաղորդել հայկական տարրեր՝ ձեռարվեստի, մանրանկարչության հայկական զարդանախշերով»:

Թումանյանի ստեղծագործությունների թարգմանիչ տկն Ալիս Վառվառյանը շնորհակալություն հայտնեց Վարուժան Սիրաբյանին (հրատարակչության տնօրեն), Տիգրան Եկավյանին, Գյուլբենկյան հաստատությանը եւ բոլոր նրանց, ովքեր օգնել եւ աջակցել են գրքի հրատարակությանը: Նա պատմեց, թե ինչպիսի ոգեւորությամբ ու հիացմունքով է թարգմանել Թումանյանի 12 հեքիաթները, 5 բալլադները եւ 7 պոեմները ու դրանք զետեղել մեկ գրքում: Մինչ այդ նա առանձին գրքերով՝ արեւելահայերեն, արեւմտահայերեն եւ ֆրանսերեն լեզուներով ներկայացրել է Հովհ. Թումանյանի հեքիաթները, որպեսզի սփյուռքահայերը հեշտությամբ ծանոթանան մեծ գրողի գործերին:

Շնորհանդեսին ներկա էր Փարիզի l'Europe et l'Orient հանդեսի տնօրեն, Փարիզի Չոբանյան հիմնարկի հիմնադիր, ՌԱԿ գործիչ Վարուժան Սիրաբյանը: Նա ներկայացրեց գրքի թարգմանիչին ու մանրամասներ պատմեց գրքի ստեղծման հետ կապված: «**Ազգ**»-ի հետ զրույցում պրն Սիրաբյանն ասաց. «Ալիս Վառվառյանը տարիներ առաջ շատ հաջող թարգմանել է «Սասունցի հերոսները» երկհատորյակը, որն ամբողջությամբ Սասունցի Դավթին էր վերաբերում, բայց այլ վերնագրով ներկայացրեց: Թումանյանը տկն Ալիսի ամենասիրված գրողն է: Նա դիմել էր Ֆրանսիայում Հայաստանի դեսպանությանը եւ առաջարկել, որ ՀՀ անկախության 20-ամյակի հոբելյանական միջոցառումների ցանկում ընդգրկեն ու օգնեն տպագրելու Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների ժողովածուն: Դեսպանությունն այդ մասին հայտնում է հրատարակչությանը եւ վերջինս սկսում է գտնել ֆինանսավորողներ: Դիմում են Գյուլբենկյան հիմնարկին, Ֆրանսիայի մշակույթի նախարարության գրքերի կենտրոնին եւ նրանց աջակցությամբ շատ արագ հրաշալի տպագրությամբ հրատարակվեց 1000 օրինակով»:

Ժողովածուից մեկական օրինակ նվիրվել է Խնկո Ապոր գրադարանին, Հովհ. Թումանյանի թանգարանին եւ կիրակի օրը գրքի հեղինակները, կազմակերպմամբ Արմենական-ՌԱԿ-ի, կայցելեն Լոռու մարզի Դսեղ գյուղ, Հովհ. Թումանյանի տուն-թանգարան:

Կլինի նաեւ հանդիպում ու դասախոսություն թարգմանական մասնագիտության շուրջը՝ Երեւանի եվրոպական համալսարանի դասախոսական եւ ուսանողական կազմի հետ:

**ՍԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# «Հորովելը» հնչեց 52 երկրներում

Սույն թվականի օգոստոսի 25-ից 30-ը Ուզբեկստանի Սամարղանդ քաղաքում տեղի ունեցավ «Շարկ Տարոնալարի» (Արեւելյան մեղեդիներ) երաժշտական միջազգային փառատոնը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո, որին մասնակցում էին աշխարհի 50-ից ավելի երկրներ, որոնց թվում ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հնդկաստան, Չինաստան, Պակիստան, Ռուսաստան եւ այլն: Հայաստանը ներկայացել էր երկու խմբով. խումբ առաջին՝ մենակատար Էդգար Մարտիրոսյան, դուդուկահար Էդվարդ Մանուչարյան եւ խմբի ղեկավար՝ Գեւորգ Մարտիրոսյան: Խումբ երկրորդ՝ Ջիվան Գասպարյան (կրտսեր)՝ Վազգեն Մակարյանի եւ Արմեն Ղազարյանի նվագակցությամբ: Երկուական խմբով էին ներկայացել նաեւ Չինաստանը՝ (Պեկինի օպերային թատրոնի արտիստները), Ռուսաստանի Դաշնությունը (մեկ խումբը մրցույթից դուրս ելույթով) եւ Ուզբեկստանը (Տաշքենդի պետական կոնսերվատորիայի անսամբլ): Պատվավոր հյուրերն էին Ջիվան Գասպարյանը (ավագ), Բրունեյից՝ այդ պետության կուլտուրայի երիտասարդության եւ սպորտի նախարար Նազիր Բին Հաջի Աբրին ժողովուրդը լսում էր լուռ եւ վերջում լոկ ծափահարում, իսկ երբ երկու լեզուներով (ուզբեկերեն եւ անգլերեն) բեմ էր հրավիրվում Հայաստանը ներկայացնող խումբը, հանդիսատեսները մեծ խանդավառությամբ էին ծափահարում եւ ամբողջ ելույթի ժամանակ պարում էին՝ սկսած ամենափոքրիկ հանդիսատեսից մինչեւ ծերունիները: Երգի ավարտից հետո անպայման խնդրում էին, որ Էդգարը եւս մեկ երգ էլ երգի: Ելույթի ժամանակ պարում էր նաեւ խանկիմը տորիայի պրոֆեսոր, Եգիպտոսի առաջին բարիտոն, Ալի Գաբեր Էլ Բելթեչին եւ համբուրելով Էդգարի ճակատը, ասաց. «Շնորհակալություն փայլուն կատարման համար, շնորհավորում եմ, ուրախ եմ, որ լսեցի Մեծն Կոմիտասի «Հորովելը», բայց ինձ անչափ հուզեց «Էստոնական»-ը, քանի որ երաժշտության հեղինակն իմ լավ բարեկամ Վլադիլեն Բալյանն է»:

«Շարկ Տարոնալարի»-ն հեղինակավոր երաժշտական փառա-



*Էդգար Մարտիրոսյանը եւ Էդվարդ Մանուչարյանը*



Գաբել Ալի ալ Բալթաջին եւ Գեւորգ Մարտիրոսյանը

դուլլան, Հնդկաստանից՝ Դելիի կոնսերվատորիայի ղեկավար Կումար Վիրենդերը եւ Սաինի Վիփալը, Իտալիայից 11 հոգի՝ Գարրիս Ալբանոյի գլխավորությամբ:

Օգոստոսի 26-ին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Կարիմովը բացեց VIII երաժշտական փառատոնը, որից հետո տեղի ունեցավ մեծ համերգ Ուզբեկստանի արտիստների մասնակցությամբ: Բեմ բարձրացավ նաեւ Ալբանոն եւ երգեց իր հանրաճանաչ «Ֆենեչիտա»-ն: Ելույթից հետո Ուզբեկստանի նախագահը բարձրանալով բեմ, նրան նվիրեց ուզբեկական խալաթ: Հայաստանի խմբերին վիճակահանությամբ բախտ վիճակվեց ելույթ ունենալ օգոստոսի 29-ին: Ամսի 27-ին եւ 28-ին մեր խումբն ունեցավ 3 համերգի մասնակցություն Սամարղանդի մերձակա քաղաքներում: Յուրաքանչյուր համերգին մասնակցում էր 8 կամ 9 երկիր, քանի որ համերգները բացօթյա էին, հավաքվում էր շատ հոծ բազմություն՝ մոտավորապես 2-3 հազար հանդիսատես:

Զգիտեմ ինչո՞ւ, բայց Էդգար Մարտիրոսյանի ելույթը բոլոր համերգներում վերջին համարն էր: Մինչ այդ, ելույթ ունեցող երկրների (մարզպետ) իր ողջ խանկիմիարով (կազմով): Համերգից հետո տրվում էր մեծ ճաշկերույթ եւ թե մարզպետը, թե քաղաքապետը անպայման արդեն խմում էին Հայաստանի, հայ ժողովրդի, Էդգարի եւ Էդվարդի կենացը, որին հետեւում էր նվերների հանձնումը մեր երաժիշտներին:

Մի խոսքով, հպարտության զգացումը, որ հայ ենք եւ ներկայացնում ենք մեր երկիրը 52 պետությունների շարքում, մեզ երբեք չլքեց:

Օգոստոսի 29-ին Ռեգիարան կոչվող հրապարակում տեղի ունեցավ մեր մասնակցությունը փառատոնին: Յուրաքանչյուր երկրին ելույթի համար հատկացված էր 15 րոպե, որի ժամանակ պետք է կատարվեր 3 ստեղծագործություն: Հայաստանը ներկայացնող երկու խմբերից առաջինը ելույթ ունեցան Էդգար Մարտիրոսյանը, Էդվարդ Մանուչարյանը (դուդուկ) եւ Կարո Աղաբեկյանը (դուդուկ-նվագակցող):

Էդգարը կատարեց «Քանքարավոր ընկեր» (Ջիվանի), «Հորովել» (Կոմիտաս) եւ «Էստոնական» (խոսք. Ավ. Իսահակյան, երաժշտ. Վլ. Բալյան) երգերը: Կատարումից հետո նրան մոտեցավ Եգիպտոսի (Կահիրե) կոնսերվատոն է, որը տեղի է ունենում երկու տարին մեկ:

2005 թ. VI փառատոնի պատվավոր հյուրն է եղել աշխարհահռչակ երգիչ-երգահան Շառլ Ազնավուրը:

2011 թ. ժյուրին նախագահում էր Հյուսիսային Կորեան, իսկ անդամներն էին Բելգիան, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Իսրայելը, Կանադան եւ Սինգապուրը:

Սահմանված էր մեկ գրան պրի մրցանակ (10,000 ԱՄՆ դոլ.), որը տրվեց Կորեային:

I մրցանակի (երկու մրց., 10.000 $) արժանացան Չինաստանը եւ Լիտվան:

II մրցանակի (երեք մրց., 7.000 $) արժանացան Թուրքմենստանը, Իրանը եւ Ուզբեկստանը:

III մրցանակի (երեք մրց., 3.000 $)՝ Ռուսաստանը, Մադագասկարը եւ Վրաստանը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվոգրերի արժանացան (հազարական դոլ.) Հայաստանը՝ Ջիվան Գասպարյան, Ուզբեկստանը եւ Ադրբեջանը: Էդգարին տրվեց դիպլոմ հանդիսատեսի «Համակրանք» անվանումով: Այն մարզերում, որտեղ փառատոնից դուրս համերգ էինք տվել, Հայաստանի I խմբին շնորհեցին 2500 ԱՄՆ դոլար եւ տեսախցիկ:

Կարեւորը՝ «Հորովելը» հնչեց 52 երկրների համար:

Փառատոնին մեր մասնակցությունն իրականացավ «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամի, ՀՀ Սպորտի եւ երիտասարդության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության օգնությամբ: Օգնության եւ աջակցության համար խորին երախտագիտությամբ մեր շնորհակալությունն ենք հայտնում նաեւ Ազգային ժողովի պատգամավորներ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից Արշակ Մխիթարյանին եւ Մելիք Մանուկյանին (ԲՀԿ) եւ Արցնիի «Լեչ Կոմիսիա»-ի գլխավոր տնօրեն Արարատ Մահտեսյանին:

**ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**Սամարղանդ-Բուժական**

# «Միկայի» շախմատիստուհիները գլխավորեցին աղյուսակը

Նախորդ տուրում կրած անհաջողությունից հետո «Միկայի» թիմերը կրկին հաղթանակով ավարտեցին իրենց մրցախաղերը: Կանանց մրցաշարում «Միկայի» շախմատիստուհիները 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին «Գիպրոռեչտրանսին»: Առաջին խաղատախտակի վրա Էլինա Դանիելյանն անհաջողության մատնվեց Նատալիա Ժուկովայի հետ մրցավեճում՝ կրելով անդրանիկ պարտությունը: 2-րդ խաղատախտակի վրա Հարիկա Դրոնավալին ոչ-ոքի խաղաց Բաթյոլյագ Մունգունտուլի հետ: Մեր թիմի հաղթանակն ապահովեցին Չժու Չենն ու Լիլիթ Մկրտչյանը, որոնք առավելության հասան համապատասխանաբար Ելենա Զայացի եւ Իրինա Վասիլեւիչի նկատմամբ:



5-րդ տուրում առաջին պարտությունը կրեց աղյուսակը 8 միավորով գլխավորող «ԱԵՄ Լուքսենը», որին նախորդ մրցախաղում զիջել էր «Միկան»: Առաջատարը 0,5-3,5 հաշվով պարտվեց AVS-ին: Միակ կես միավորն իր թիմին պարգեւեց Լելա Ջավախիշվիլին՝ հաշտություն կնքելով Վիկտորիա Չմիլիտեի հետ: Մյուս պարտիաներում Անաստասիա Ստեֆանովան հաղթեց Նանա Ձագնիձեին, Կատերինա Լահնոն պարտության մատնեց Աննա Զատոնսկիխին, Նատալիա Պոգոնինան էլ առավելության հասավ Անաստասիա Բոդնարուկի նկատմամբ:

Այս պարտությունը թանկ նստեց «ԱԵՄ Լուքսենին», որը 8 միավորով (ընդհանուր միավորները՝ 13,5) նահանջեց 2-րդ հորիզոնական՝ տեղը զիջելով «Միկային»: Վերջինս եւս ունի թիմային 8 միավոր, սակայն բոլոր պարտիաներում վաստակել է 14 միավոր: Թիմում 4-ական միավոր են վաստակել Լիլիթ Մկրտչյանն ու Հարիկա Դրոնավալին, 3-ական միավոր ունեն Էլինա Դանիելյանն ու Չժու Չենը: Նշենք, որ ի տարբերություն մյուս թիմերի, «Միկայում» պահեստային շախմատիստուհի ընդգրկված չէ, ուստի մեր քառյակը առանց հանգստի պետք է անցկացնի բոլոր 7 մրցախաղերը:

Նախավերջին՝ 6-րդ տուրում «Միկան» մրցելու է թիմային 8 եւ ընդհանուր 13 միավոր ունեցող AVS-ի հետ: Վստահաբար կարելի է ասել, որ դա չեմպիոնի կոչման համար վճռորոշ մրցախաղն է: Եթե «Միկային» հաջողվի հաղթել մրցակցին, ապա 1-ին տեղը գրավելու լուրջ հայտ կներկայացնի: Կարեւոր նշանակություն ունի նաեւ «ԱԵՄ Լուքսենի» մրցավեճը SHSM-RGSU-ի հետ: Վերջինս 3,5-0,5 հաշվով հաղթելով «Անատոլիային», 7 միավորով ընթանում է 4-րդ տեղում:

Տղամարդկանց մրցաշարում «Միկան» 4,5-1,5 հաշվով հաղթեց «Գլասինակ Սոկոլակին»: Իրենց օգտին հաղթական միավորներ գրանցեցին Հրանտ Մելքումյանը, Զավեն Անդրեասյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնց մրցակիցներն էին համապատասխանաբար Վլադիմիր Բիլիչը, Պրեդրագ Պլակալովիչն ու Սաշա Կոստրիչը: Սարգսյան-Սոլակ, Պետրոսյան-Կովալեւիչ, Փաշիկյան-Բատինիչ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

«Միկայում» բոլորից հաջող է խաղում Զավեն Անդրեասյանը, որը 5 հնարավորից վաստակել է 4,5 միավոր: 4 միավոր ունի Արման Փաշիկյանը, 3,5՝ Գաբրիել Սարգսյանը: 3-ական միավոր են վաստակել Հրանտ Մելքումյանն ու Ավետիք Գրիգորյանը: Ռոբերտ Հովհաննիսյանը շահել է անցկացրած 2 պարտիաներն էլ: Տիգրան Պետրոսյանը 4 հնարավորից թիմին 1,5 միավոր է պարգեւել:

5-րդ տուրից հետո «Միկան» թիմային 8 եւ ընդհանուր 21,5 միավորով ընթանում է 6-րդ տեղում: 10-ական միավորով առջեւում են Սանկտ Պետերբուրգի շախմատի ֆեդերացիայի թիմը (ընդհանուր միավորները՝ 25) եւ «Բադեն-Բադենը» (24), որոնք հերթական հաղթանակները տոնեցին: Սանկտպետերբուրգցիները 4,5-1,5 հաշվով առավելության հասան «Տոմսկ-400-ի» նկատմամբ: 3-րդ խաղատախտակի վրա Սերգեյ Մովսիսյանը հաղթեց Էռնեստո Ինարկիեւին: Մովսիսյանը շատ վստահ է խաղում՝ 5 հնարավորից վաստակելով 4,5 միավոր: Թիմում նման արդյունք ունի միայն Վադիմ Զվյագինցեւը:

«Բադեն-Բադենն» էլ 3,5-2,5 հաշվով հաղթեց SHSM-64-ին: Հաղթողների կազմում մեկական միավոր վաստակեցին Ալեքսեյ Շիրովն ու Արկադի Նայդիչը՝ պարտության մատնելով համապատասխանաբար Վան Հաոյին եւ Անիշ Գիրիին: 3-4-րդ տեղերը 23,5-ական միավորով բաժանում են ՍՕԿԱՐ-ը եւ «Էկոնոմիստը», որոնք թիմային 8 միավոր ունեն: ՍՕԿԱՐ-ը 4,5-1,5 հաշվով հաղթեց «Լունդսին», նույնպիսի արդյունքով «Էկոնոմիստն» առավելության հասավ «Բեեր Շեբայի» նկատմամբ:

6-րդ տուրում կենտրոնականը Սանկտ Պետերբուրգի թիմի եւ «Բադեն-Բադենի» մրցավեճն է: «Միկան» կմրցի «Յուգրայի» հետ, որը եւս 8 միավոր ունի: Մրցանակային տեղի հավակնելու համար «Միկան» պետք է մնացած 2 մրցախաղերում էլ հաղթի հնարավորինս մեծ հաշիվներով:

# ԱՊՀ թիմերը հաղթանակ չտոնեցին

Կայացան ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 2-րդ տուրի հանդիպումները: Նախկին ԽՍՀՄ-ը ներկայացնող 4 թիմերից եւ ոչ մեկը չկարողացավ հաղթել: A խմբում հանդես եկող Կազանի «Ռուբինը» սեփական հարկի տակ ոչ-ոքի (2-2) ավարտեց հանդիպումը ՊԱՕԿ-ի հետ: Նույն խմբում «Տոտենհեմը» 3-1 հաշվով հաղթելով «Շեմրոկ Ռովերսին», վաստակեց 4 միավոր ու հավասարվեց «Ռուբինին»:

Մոսկվայի «Լոկոմոտիվը» նոր գլխավոր մարզիչ Ժոզե Կոուսեյրոյի գլխավորությամբ առաջին պարտությունը կրեց՝ սեփական դաշտում 0-2 հաշվով պարտվելով բելգիական «Անդերլեխտին»: Վերջինս L խմբում 6 միավորով գլխավորեց աղյուսակը: Մյուս խաղում «Շտուրմը» հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթեց ԱԵԿ-ին:



Կիեւի «Դինամոյի» ֆուտբոլիստները շատ ջանքեր ներդրեցին իրենց խաղընկերոջ՝ Անդրեյ Շեւչենկոյի 35-ամյակը հաղթանակով նշելու համար, սակայն դա նրանց չհաջողվեց: Թել Ավիվում «Մաքաբիի» հետ մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1: Ուկրաինական մյուս ակումբն էլ՝ Խարկովի «Մետալիստը» բավարարվեց ոչ-ոքի (1-1) արդյունքով հոլանդական «Ալկմարի» հետ մրցավեճում: «Վորսկլան» էլ պարտվեց «Հաննովերին» (1-2):

2-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց F խմբում հանդես եկող իտալական «Ատլետիկը»՝ 2-0 հաշվով պարտության մատնելով ֆրանսիական ՊՍԺ-ին: D խմբում էլ առաջատարը պորտուգալական «Սպորտինգն» է, որը 2-1 հաշվով առավելության հասավ «Լացիոյի» նկատմամբ:

Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. «Ստանդարտ»-«Կոպենհագեն»՝ 3-0, «Լեգիա»-«Հապոել»՝ 3-2, «Ռապիդ»-«Էյնդհովեն»՝ 1-3, «Վասլույ»-«Ցյուրիխ»՝ 2-2, «Սթոք Սիթի»-«Բեշիքթաշ»՝ 2-1, «Զալցբուրգ»-«Սլովան»՝ 3-0, «Մալմյո»-«Աուստրիա»՝ 1-2, «Բրագա»-«Բրյուգե»՝ 1-2, «Մարիբոր»-«Բիրմինգհեմ»՝ 1-2, «Սելթիկ»-«Ուդինեզե»՝ 1-1, «Ռեն»-«Ատլետիկո»՝ 1-1, «Շալկե-04»-«Մաքաբի» (Հայֆա)՝ 3-1, ԱԵԿ (Կիպրոս)-«Ստյաուա»՝ 1-1, «Տվենտե»-«Վիսլա»՝ 4-1, «Օդենսե»-«Ֆուլհեմ»՝ 0-2:

**ՖՈՒՏԲՈԼ**

# Վճռորոշ մրցախաղ

Այսօր կայանալիք «Փյունիկ»-«Ուլիս», «Արարատ»-«Իմպուլս» հանդիպումներով մեկնարկում է ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 24-րդ տուրը: Ուշադրության կենտրոնում կլինի «Փյունիկի» եւ «Ուլիսի» մրցավեճը, որը շատ բանով կկանխորոշի չեմպիոնության համար մղվող պայքարի ելքը: «Ուլիսը» ներկայումս 47 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը եւ 8 միավորով գերազանցում է չեմպիոնին: Եթե «Ուլիսին» հաջողվի հաղթել, ապա չեմպիոնության հարցը կարելի է լուծված համարել: Խաղը կսկսվի ժամը 19-ին «Հանրապետական» մարզադաշտում:

Ընթացիկ առաջնությունում թիմերի միջեւ կայացած 3 հանդիպումներում մեկական անգամ հաջողությունն ուղեկցել է մրցակիցներին, մեկ խաղում էլ գրանցվել է ոչ-ոքի: Առաջին շրջանում հաղթել է «Ուլիսն» Արտյոմ Ադամյանի խփած միակ գոլի շնորհիվ: 2-րդում «Փյունիկը» ռեւանշի է հասել 3-1 հաշվով, իսկ 3-րդ շրջանի հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝ 1-1:

Վաղը կկայանան տուրի մյուս երկու հանդիպումները: «Շիրակը» կհյուրընկալի «Գանձասարին», Երեւանում կմրցեն «Բանանցն» ու «Միկան»: Ի դեպ, վերջինիս բրազիլացի ֆուտբոլիստ Ալեքսի որակազրկման ժամկետը 5 խաղից կրճատվել է 3-ի եւ նա արդեն կարող է մասնակցել այդ հանդիպմանը:

# Բազկամարտիկները որոշեցին ուժեղագույններին

Երեւանի «Միկա» մարզադահլիճում ավարտվեց բազկամարտի Հայաստանի առաջնությունը, որը նվիրված էր մարզաձեւի հանրապետական ֆեդերացիայի առաջին նախագահ Աշոտ Սարգսյանի հիշատակին: Մրցաշարն անցավ Հայաստանի բազկամարտի ֆեդերացիայի պատվավոր նախագահ, բազկամարտի Եվրոպայի չեմպիոն եւ աշխարհի առաջնության մրցանակակիր, սպորտի վաստակավոր վարպետ, ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի հովանու ներքո: Սահմանվել էր Հայաստանի առաջնությունների համար աննախադեպ բարձր մրցանակային հիմնադրամ՝ 12 մլն դրամ:



ՖՈՏՈԼՈՒՐ

Համառ պայքարից հետո քաշային 6 կարգերում հայտնի դարձան Հայաստանի չեմպիոնները: Ձախ ձեռքով անցկացված մրցապայքարում ուժեղագույններ ճանաչվեցին Արման Փիլոյանը (60 կգ, Արմավիր), Վլադիմիր Մնացականյանը (70 կգ, Երեւան), Վրեժ Սեդրակյանը (80 կգ, Երեւան), Կարեն Գյումժյանը (90 կգ, Շիրակ), Արմեն Չիբուխյանը (100 կգ, Տավուշ), Ոսկան Գեւորգյանը (գերծանր քաշ, Երեւան):

Աջ ձեռքով անցկացված մրցապայքարում էլ Արման Փիլոյանը, Վլադիմիր Մնացականյանը, Վրեժ Սեդրակյանը եւ Արմեն Չուբուխյանը եզրափակիչում հաղթեցին մրցակիցներին ու կրկին չեմպիոններ հռչակվեցին: Քաշային մյուս կարգերում ուժեղագույնը ճանաչվեցին Վարդան Դավթյանը (90 կգ, Երեւան) եւ Դավիթ Բոյաջյանը (գերծանր քաշ, Կոտայք):

Գերծանրքաշայինների մրցաշարի մրցանակակիրներին պարգեւատրեց Գագիկ Ծառուկյանը, որը Հայաստանում ծանրամարտի զարգացման գործում ունեցած ներդրման համար արժանացավ հուշամեդալի եւ գավաթի:

# Սամվել Մաթեւոսյանն էլ թողեց ասպարեզը

Բաքվում ընթացող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում, որտեղ խաղարկվում են նաեւ 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը, առայժմ անհաջող են հանդես գալիս հայ բռնցքամարտիկները: Հայաստանի 3-րդ պատվիրակն էլ՝ Սամվել Մաթեւոսյանը ռինգը թողեց պարտված: Մինչեւ 75 կգ քաշայինների մրցավեճում Սամվելը 11-22 հաշվով զիջեց մոնղոլ Թուվշիբաթ Բյամբային: Մեր թիմի կազմում մնացին 4 բռնցքամարտիկներ, որոնք դեռեւս ռինգ դուրս չեն եկել:

# Վերադարձ ռինգ 26-ամյա բանտարկությունից հետո

Հոկտեմբերի 15-ին Լոս Անջելեսում Բեռնարդ Հոպկինսի եւ Չեդ Դոուսոնի մասնակցությամբ կայանալիք պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի ընթացքում տեղի կունենա 26 տարի ամերիկյան բանտում անցկացրած նախկին բռնցքամարտիկ, 52-ամյա Դյուի Բոզելայի նորամուտը պրոֆեսիոնալ ռինգում:

1983-ին Բոզելան երկարատեւ բանտարկության էր դատապարտվել 92-ամյա ծեր կնոջ սպանության մեղադրանքով: Նա 26 տարի անցկացրեց Նյու Յորքի հանրահայտ Սինգ Սինգ բանտում: Այդ ընթացքում նա շարունակում էր պնդել, որ մեղավոր չէ, ինքը չի կատարել այդ հանցագործությունը: Հատուկ հանձնախումբը վերաքննելով նրա գործը, 4 անգամ մերժել էր ժամկետից շուտ ազատվելու Բոզելայի խնդրանքը: Վերջապես նրա գործով հետաքրքրվեցին պրոֆեսիոնալ փաստաբանները, որոնք ապացուցեցին բանտարկյալի անմեղությունը: 2009-ի հոկտեմբերին նախկին բռնցքամարտիկն ազատվեց բանտից:

Բանտարկության ընթացքում Բոզելան շարունակեց իր մարզումները եւ նույնիսկ դարձավ Սինգ Սինգի չեմպիոն: Բանտից ազատվելուց հետո նա Նյու Յորքում դեռահասներին սովորեցնում էր բռնցքամարտի գաղտնիքները: Այս տարի Բոզելան արժանացավ ամերիկյան ESPN հեռուստաընկերության The Arthur Ashe Courage Award մրցանակին ցուցաբերած խիզախության համար: Պարգեւատրման արարողության ժամանակ Բոզելան հայտարարել էր, որ մինչեւ օրս երազում է պրոֆեսիոնալ ռինգում գեթ մեկ մենամարտ անցկացնել: Եվ ահա նրա երազանքն իրականություն կդառնա:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

## Օրվա հետքերով

# Orange հիմնադրամի աջակցությամբ 5330 մարդ անվճար ակնաբուժական աջակցություն է ստացել Շիրակի մարզում



30 սեպտեմբերի, 2011 թ.: Ավարտին է մոտենում Շիրակի մարզում Orange հիմնադրամի եւ Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) համատեղ ծրագիրը, որի նպատակն էր Շիրակի մարզի բնակիչների համար անցկացնել անվճար ակնային զննումներ եւ իրականացնել բուժումներ սոցիալապես անապահով անձանց համար:

Այս կապակցությամբ այսօր Ախուրյանում կայանած Աչքի շարժական հիվանդանոց (ԱՇՀ) էր այցելել Orange հիմնադրամի խորհրդի նախագահ Բրունո Դյութուան՝ ծանոթանալու կատարված աշխատանքերին: ՀԱՆ-ի Շարժական հիվանդանոցը, որտեղ իրականացվում են բուժումները ու վիրահատությունները, զինված է ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով: Բրունո Դյութուան ծանոթացավ ԱՇՀ-ում առկա լազերներին եւ վիրահատական սարքավորմանը, ականատես եղավ հիվանդների զննմանն ու վիրահատություններին եւ զրուցեց մարդկանց հետ նրանց տպավորությունների շուրջ:

Ծրագրի շրջանակներում 4200 մեծահասակներ եւ 1130 երեխաներ անցել են ակնային հետազոտություն, շուրջ 640 մեծահասակներ անցել են խորացված հետազոտություն ԱՇՀ-ում, տրամադրվել է շուրջ 2000 ակնոց: ԱՇՀ-ում իրականացվել են շուրջ 270 վիրահատություններ եւ լազերային բուժումներ: Ծրագրի շրջանակում, ակնային զննումներին զուգահեռ, ավելի քան 400 երեխաների համար Շիրակի մարզի ինը դպրոցներում անց են կացվել նաեւ ակնային խնամքի հանրակրթական հատուկ դասընթացներ: Շիրակի մարզում ՀԱՆ-ի աշխատանքերին աջակցելու համար Orange Հիմնադրամը տրամադրել էր 9 միլիոն դրամ:

«Տեսողական խնդիրներ ունեցողներն Orange Հիմնադրամի հոգածության կենտրոնում են ոչ միայն Հայաստանում, այլ բազմաթիվ այլ երկրներում, ուր գործում է հիմնադրամը: Մեր ընկերության ամենաառաջնային խնդիրն է հեշտացնել հաղորդակցումը մարդկանց միջեւ, իսկ մարդկային հաղորդակցության գործում մեծ է տեսողության դերը: Այսօր մենք հանդիպեցինք մարդկանց, ում կյանքը փոխվել է Հիմնադրամի ու մեր գործընկերների շնորհիվ: Հպարտ ենք համագործակցել Հայկական Ակնաբուժության նախագծի հետ: Հենց այս արդյունքները տեսնելով ենք որոշել շարունակել համագործակցությունը: Հաջորդ մարզը, ուր կայցելի շարժական հիվանդանոցը, կլինի Արագածոտնը», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

Արագածոտնի մարզում ակնային զննումները տեղի բժիշկների մասնակցությամբ արդեն մեկնարկել են եւ կշարունակվեն մինչեւ նոյեմբերի վերջ: Նախատեսվում է ակնային զննումներ իրականացնել շուրջ 1800 մեծահասակների եւ 1000 երեխաների համար, վիրահատել մոտ 180 հիվանդի եւ տրամադրել շուրջ 500 ակնոց: Բացի այդ, ակնային զննումներին զուգահեռ, հանրակրթական դասընթացներ կկազմակերպվեն Արագածոտնի մարզի ինը դպրոցներում: Ծրագրի իրականացման համար Orange Հիմնադրամի կողմից ՀԱՆ-ին տրամադրվել է շուրջ 5 մլն դրամ:

Բնակչության ակնային զննումների աշխատանքերում ՀԱՆ-ին ակտիվորեն աջակցում են տեղի ակնաբույժները՝ մասնավորապես Թալինի եւ Աշտարակի շրջաններում: Այստեղի եւ հարակից գյուղերի բնակիչները պետք է դիմեն տեղի ակնաբույժներին, ովքեր հիվանդներին կընդունեն շրջկենտրոններում կամ որոշակի օրերի կայցելեն շրջանների գյուղերը: Այդ այցելությունների ժամանակացույցին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար բնակիչները պետք է հետեւեն իրենց համայնքներում փակցված հայտարարություններին, ինչպես նաեւ դիմեն տեղի բուժկետ կամ մարզպետարանի առողջապահության բաժին: ՀԱՆ-ի բժշկական խմբերը կայցելեն Արագածի եւ Ապարանի շրջանները հոկտեմբեր ամսվա ընթացքում: Աչքի շարժական հիվանդանոցը կկայանի՝ հոկտեմբերի 18-21-ը՝ Ծաղկահովիտում, հոկտեմբերի 24-27-ը՝ Ապարանում, հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 3-ը՝ Թալինում, եւ նոյեմբերի 7-ից մինչեւ ծրագրի ավարտը՝ Աշտարակում:

*Աշխատանքների եւ այցերի ստույգ ժամանակացույցը կարելի է գտնել www.eyecareproject-armenia.com կայքում:*

# Հոկտեմբերը՝ գյումրեցի անօթեւան ընտանիքներին իրազեկելու եւ աջակցելու ամիս

*Բնակարան ստանալու համար փաստաթղթեր ներկայացնելու վերջնաժամկետը նոյեմբերի 1-ն է, իսկ 1400 ընտանիք դեռ նման խնդիր ունի*

**Աղետի գոտում պետական բնակարանաշինական ծրագրի շրջանակներում բնակարան ստանալու հավակնող անօթեւան ընտանիքները դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթները պետք է ներկայացնեն մինչեւ ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը: ՀՀ կառավարությունը նման վերջնաժամկետ է սահմանել իր սեպտեմբերի 15-ի որոշմամբ: Փաստորեն մեկ ամիս ժամանակ է մնում, մինչդեռ Գյումրիում ներկա պահին կան բնակբաշխման հանձնաժողովին պահանջվող փաստաթղթեր ընդհանրապես չներկայացրած ավելի քան 300 եւ փաստաթղթերի ոչ ամբողջական փաթեթ ներկայացրած 1100 նման ընտանիքներ: Եթե նրանք մինչեւ սահմանված օրը չկարողանան փաստաթղթերը համալրել եւ ներկայացնել, կարող են կորցնել պետության կողմից բնակարանային փոխհատուցման իրենց իրավունքը:**

**Նման իրավիճակից անհանգստացած, երկրաշարժից անօթեւանների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը կլոր սեղան-հանդիպում էր կազմակերպել քաղաքում գործող հասարակական կազմակերպությունների եւ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, որին մասնակցում էին նաեւ քաղաքապետարանի համապատասխան բաժնի պատասխանատուները: Կենտրոնի դիտարկումներով՝ մինչեւ օրս փաստաթղթեր չներկայացրածների թվում կան այնպիսի ընտանիքներ, որոնք գտնվելով ծայրահեղ ծանր սոցիալական պայմաններում, պահանջվող փաստաթղթերը ֆինանսական եւ ֆիզիկական դժվարությունների պատճառով չեն կարողանում տարբեր ծառայություններից ձեռք բերել: Տասնյակ բազմանդամ ընտանիքների ներսում էլ ստանալիք բնակարանի պատկանելիության վերաբերյալ չի կայանում համաձայնություն, իսկ կան ընտանիքներ էլ, որոնք պարզապես իրազեկված չեն:**

**Հանդիպման մասնակիցներին ներկայացվեց «Շիրակ կենտրոնի» կոչը քաղաքում գործող լրատվամիջոցներին ու քաղաքացիական հասարակության կառույցներին՝ առաջիկա հոկտեմբերը դարձնել գյումրեցի անօթեւան ընտանիքների իրազեկման եւ նրանց աջակցման ամիս, համատեղ ուժերով օգնել, որ «նեղության ու կարիքի մեջ գտնվող համաքաղաքացիներն օր առաջ կարողանան ազատվել ցուրտ եւ խոնավ տնակներից»:**

Գ. Ս.

### ԱԴԵՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՏ

## Դե՛ լավ, էլի՛

**1news.az-ը, որ գրեթե իշխանական լրատվամիջոց է, տարածել է «սենսացիոն» լուր: Ըստ այդմ, «հայերը Խաչեն գետով լողարկել են երկու ական, որը հայտնաբերել եւ այդ մասին ահազանգել են Աղդամի շրջանի Այաղ Գարվանդ գյուղի բնակիչները: Ականներից մեկը հակատանկային է, մյուսը՝ հակահետեւակային: Մասնագետները պարզել են, որ դրանք արտադրված են Հայաստանում: Նույն օրն ականները վնասազերծվել են»:**

**Թե ինչպե՞ս են «հայերն ականներ լողարկել», այդ մասին, իհարկե, ադրբեջանական լրատվամիջոցը ոչինչ չի գրում: Եվ դրանով իսկ բացահայտում է սույն տեղեկատվության բացահայտ անմտությունը: Քանի որ, ինչպես ռուսները կասեն, «ոզնուն էլ հասկանալի է», որ անհնար է գետով ականներ լողարկել: Այն պարզ պատճառով, որ ականը «փայտ» չէ, որ ջրասույզ չլինի եւ լողա մինչեւ «նշանակման վայր»:**

**Բայց եթե անգամ հայերը մտադրված լինեին վառելափայտ առաքել աղդամցիներին, քանի որ ձմեռը մոտենում է, իսկ նրանք գազ չունեն, միեւնույնն է, կմատնվեին անհաջողության: Քանի որ սակավաջուր Խաչեն գետով դա անհնար է անել: Մանավանդ՝ Խաչենի ջրերի մեծագույն մասը կուտակվում է վերջերս շահագործման հանձնված ջրամբարում, մնացածն էլ՝ օգտագործվում ոռոգման նպատակով: Այնպես որ, ներկա դրությամբ Խաչենի այն հատվածը, որ Աղդամի՝ ադրբեջանցիների կողմից վերահսկվող տարածքում է, պարզապես չորահուն հեղեղատ է: Ուրիշ ոչինչ:**

**Մնում է ենթադրել, որ ադրբեջանցիներն իրենք են ինչ-որ ժամանակ ականապատել Այաղ Գարվենդի շրջակայքը, հետո այդ մասին մոռացել: Տարիների ընթացքում, հավանաբար, ծածկույթը քայքայվել է, եւ ականները հայտնաբերվել ու ոչնչացվել են: Կամ, ով գիտի, գուցե իշխանություններն ականապատել են շրջակայքը, որպեսզի Այաղ Գարվենդի բնակիչները մերձճակատային գոտուց չհեռանան եւ պատանդ մնա՞ն:**

**Ամեն ինչ հնարավոր է, բայց որ Խաչեն գետով հակատանկային ական լողարկվի՝ դրա համար պետք է ունենալ միայն ազերպրոպի հիվանդ երեւակայությունը: Չե՞ն հասկանում, որ ուղղակի ծիծաղելի են դառնում:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ





ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի վարչական մասնաշենքի շինարարության մրցույթ՝ Նոր Նորք վարչական շրջան Գայի պողոտա 16/46 հասցեով:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով կամ այցելել Բանկի «Գնումների և մատակարարման» բաժին Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 09:30-16:00-ը (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է մինչև ս.թ. հոկտեմբերի 10-ը:





ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝30.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: